

ሆሊዮቲካ

ሐረር

ሎሚዳ

ሙገራ ምህራሚ ምህራሚ
ሙገራ ምህራሚ ምህራሚ

marzig

SPORTS MAGAZINE

33፡ ሆሊዮቲካ, 2014, ፡፡፡፡ 3 (381) - VOL. XXXIII N° 3


ሙገራ ምህራሚ ምህራሚ - ፡፡፡፡ ፡፡፡፡ ፡፡፡፡



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵԱՆ ՏՈՒՐՔԸ ՍՈՒՐԻՈՅ ՏԱԳՆԱՊԻՆ


Սուրիոյ արիւնալի քազնապը, անցնող երեք տարիներուն, նիւթական եւ մարդկային ահաւոր վնասներ պատճառեց երկրի բնակիչներուն: Կոյր ունրակոծումներու թէ զինեալ բախումներու ընթացքին ինկան բազմաթիւ անմեղ զոհեր, որոնց կարգին՝ 10 Հ.Մ.Ը.Մ.ականներ, Հալէպի եւ Քեսապի մէջ:

Սպորեւ Րաֆֆի Սիւլահեանի գրիչով ամփոփ անդրադարձ մը այն «Հեռացած ընկերներ»ուն մասին, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի դրօշով թաղուելու պատիւին արժանացան, բարի անուն եւ անցնելի յիշատակներ չգելով իրենց երին:



զինք ուղղեց Փուլթալի մարզաձեւ: Ան Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի «Մասիս» Փուլթալի խումբին լաւագոյն խաղացողներէն մէկը եղաւ: Եղբ. Մասիսին հայրենասիրութիւնը վեհ էր՝ ինչպէս Մասիս սարը: Քաղաքացիական պարտականութիւնը զինք ուղղեց ծառայելու սուրիական բանակին, որուն շարքերուն մէջ ալ զոհուեցաւ ան:

Եղբ. Մասիս նահատակուեցաւ Տէր Զօրի մէջ, 31 Մայիս 2013-ին:



ԵՂԲ. ՍԱԳՕ ՄԱՆՈՒԿ-ԵԱՆ.- Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքի մէջ հասակ առած եղբ. Սագօ Մանուկեան ծընած է Գամիշլի, 1994-ին: Փոքր տարիքէն ծնողքին քա-



ԵՂԲ. ՐԱՖԳԻ ՏԱՂԼ-ԵԱՆ.- Ծնած է Հալէպ, 1956-ին: Դպրոցական տարիներէն ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն, որմէ ետք միացած է Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին: Երկար տարիներ շեփորախումբին մէջ եղած է պատասխանատու եւ շեփորախումբի յանձնախումբի անդամ: Իր համեստ եւ մարդամօտ բնաւորութեան կողքին, եղբ. Րաֆֆին խիստ եւ վճռական էր իր հրահանգներուն մէջ:

Նահատակուեցաւ Հալէպի մօտակայ Մանսուրայի շրջանին մէջ, արձակագէնի մը փամփուլտով, 2 Մայիս 2013-ին:

ԵՂԲ. ՅԱՐՈՒԹ ՊԱԼԱ-ՊԱՆԵԱՆ.- Ծնած է Հալէպ, 1961-ին: Փոքր տարիքէն Հ.Մ.Ը.Մ.ի անդամակցելով մաս կազմած է Նոր Գիւղի գալլիկական վոհմակներուն եւ եղած է անոնց



պարտաճանաչ եւ տիպար գալլիկներէն մէկը: Տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ի տարազը կրելով փոխանցուած է սկաուտական շարքեր՝ ստանալով տարբեր կարգեր ու աստիճաններ, հասնելով մինչեւ փոխ խմբապետի աստիճան: Վարած է սկաուտական գանդան պաշտօններ եւ եղած է Սկաուտ. Խորհուրդի անդամ: Եղբ. Յարութ սիրուած էր իր ընկերներուն եւ հարազատներուն կողմէ եւ ճանչցուած էր իր ծառայասիրութեամբ:

Նահատակուեցաւ Նոր Գիւղի մէջ ինկած ումբի մը պատճառով, 31 Մայիս 2013-ին:

ԵՂԲ. ՅՈՎԱԿ ՔՈՐԹ-ՄՈՍԵԱՆ.- Ծնած է Քեսապ, 1989-ին: Մանուկ հասակին անդամակցեցաւ Քեսապի մասնաճիւղի շարքերուն, որպէս գալլիկ, ապա՝ սկաուտ: Տիպար Հ.Մ.Ը.Մ.-



ականի նկարագիրով եղբ. Յովակ դարձաւ օրինակելի եղբայր մը իր ընկերներուն եւ հասաւ մինչեւ Վարիչ Առաջնորդի աստիճան, ըստանձնելով սկաուտական խումբի պատասխանատուութեան պաշտօնը: Քաղաքացիական պարտականութիւնը զինք հրաւիրեց ծառայելու սուրիական բանակին, որուն շարքերուն մէջ ալ զոհուեցաւ ան:

Եղբ. Յովակ նահատակուեցաւ Հալէպի Հանանօ գօրանոցին մէջ տեղի ունեցած բախումներուն ընթացքին, 22 Դեկտեմբեր 2012-ին: Դիակը յայտնաբերուեցաւ նահատակութենէն ամիսներ ետք:

ԵՂԲ. ՄԱՍԻՍ ԽԱԶԱ-ՏՈՒՐԵԱՆ.- Ծնած է Գամիշլի, 1992-ին: Փոքր տարիքին անդամակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն, բայց մարզանքի հանդէպ ունեցած սէրը

ԱՅՍ ԹԻԻԸ

33-րդ ՏԱՐԻ, 2014, ԹԻԻ 3 (381)

www.Homenetmen.org



Մարզական ամսաթերթ
Հրատարակութիւն՝
Հ.Մ.Ը.Մ.Ի
Կեդրոնական Վարչութեան

ԽՄԲԱԳԻՐ
Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Սեդա Պէշեան-Սաղպազարեան,
Մարո Քէշիշեան (Արեւմտեան
Մ. Նահանգներ), Յակոբ
Խաչատուրեան (Արեւելեան
Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգորիս Պողարեան
Պատրիկ Կիւլպէնկեան
Աբօ Մոսիկեան

ԹԵՔՆԻԲ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Separation - Photogravure
Paklayan
Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն




Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Արձագանգ 3
- Պատգամ 7
- Անդրադարձ 9
- Դէմքերու հետ 14
- Մասնաձիղէ Մասնաձիղ 15
- Մեր Կորուստները 37

ԲԱԺԻՆՆԵՐ

- Տարբեր Հայեացքով 40



ՀԱՍՅԷ

Պուրճ Համուտ, Նոր Մարաշ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 00961 1 248043, 260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud,
Lebanon

marzig
SPORTS MAGAZINE

ՅՐԻՈՒՄ-ՎԱՃԱՌՔ

Լիբանանի մէջ թերթին
ցրումը կը կատարուի
յատուկ ցրուիչով (71 239209)
վաճառքի սակն է 4000 Լ.ո.
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ծշդուած է՝ Լիբանան \$32
Միջին Արեւելեան եւ
Եւրոպական երկիրներ \$70,
Մ. Նահանգներ եւ Աւստրալիա \$75

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.Ի Մեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:



Խ
Մ
Բ
Ա
Գ
Ր
Ա
Կ
Ա
Ն

ԴՐՕՇԱԿԸ

Գիտակից մարդու մը համար կեանքի մեծագոյն հարստութիւններէն մէկն է հայրենիքը: Կտոր մը հող, ուր պապենական արմատները թաղուած են: Հող, ուրկէ կը սնանի ան իր զգացումներով, երազներով, ոգիով եւ բովանդակ էութեամբ: Հող, որ քաղցր, ջերմ, ապրող ըլլալէ աւելի՝ անգին է ու սրբազան:

Այս է պատճառը, որ մարդ կը պայքարի իր հայրենի հողին պահպանման համար: Եթէ կորսնցուցած է զայն՝ կը պայքարի ամէն գնով անոր վերատիրացման համար: Ու կը պայքարի անոր պաշտպանութեան սիրոյն, յանձն առնելով ամէն ձեւի զոհողութիւն: Արդարեւ, մարդ, իր շրջապատը, ընկերութիւնը, ժողովուրդն ու ազգը կը կազմաւորուին, կը գոյատեւեն ու կը յառաջդիմեն միայն հարազատ հողի վրայ, սեփական հայրենիքի մէջ:

Հայրենիքը ժողովուրդի ոգին սնուցանող, կամքը կռանող, նկարագիրը կերտող բնաշխարհն է, որ սակայն աշխարհագրական իր միջավայրէն անդին, դիրքէն ու ֆիզիքական գոյութենէն անկախ, մարդկութեան կը ներկայանայ իր խորհրդանշաններով՝ քայլերգ, զինանշան, դրամանիշ եւ դրօշակ:

Դրօշակը այս պարագային կտոր մը կերպաս չէ, այլ՝ ժողովուրդի մը յաւիտենական ապրումն է, հարստացած նոյն ժողովուրդի դարաւոր ապրումներով: Ան ծնունդ կ'առնէ ժողովուրդի մը յոյզերէն եւ կը մարմնաւորէ անոր անցեալը՝ պատմութիւնը, յիշողութիւնը, վիշտն ու տառապանքը, երազն ու հաւատամքը, պարտութիւնն ու յաղթութիւնը, երկը, ներկան եւ ապագան:

Դրօշակի մը խորհուրդը կը գրուի կեանքի գնով այն ժողովուրդին, որ անոր

շուքին տակ կը ծնի եւ անոր շուքին տակ կը մեռնի:

Դրօշակը զինք ծնող ու փայփայող ժողովուրդին հոգին է ու ոգին, անոր միտքն է ու բանականութիւնը, անոր երգն է ու պարը, անոր իմացական ճարտարապետութիւնն է ու երազներուն տեսանելի մարմնաւորումը: Դրօշակը ժողովուրդի մը գութաներգն է ու ռազմերգը:

Սերունդէ սերունդ փոխանցուող դրօշակը անցեալի զգացումի մը արտացոլացումը չէ, այլ՝ պատմութեան մարմնացումը: Դրօշակն է, որ կը գօտեպնդէ զինուորն ու գաղափարի նուիրեալը՝ յանուն անկախութեան եւ ազատութեան: Անկէ ուժ կ'առնէ վիրաւոր հերոսը: Ան կը հանդիսանայ յոյսն ու ապաւենը իրաւագրկուած մարդուն:

Դրօշակը իր ժողովուրդին եւ խորհրդանշանաւոր հայրենիքին անձնագիրն է ու կալածագիրը: Անոր գոյութիւնն է ու էութիւնը:

Մարդ իր աչքերը կը բանայ դրօշակով զարդարուած հայրենիքի մէջ: Ան իր պատանեկան եւ երիտասարդական քայլերը կը նետէ դրօշակի առաջնորդութեամբ: Չափահաս տարիքին դրօշակին ծածանումը իր գերագոյն երջանկութիւնը կը դարձնէ: Հասուն տարիքին անոր օրհնութեան վայելքով կը զօրանայ, իսկ մայրամուտին՝ անոր շուքին ներքեւ յաւիտենականին յանձնուելու զոհունակութիւնը կ'ապրի:

Իսկական մարդու կեանքը դրօշակի հովանիին ներքեւ իմաստ ու արժէք կը ստանայ:

Դրօշակը մարդն է: Մարդը առանց դրօշակի ունայնութիւն է:

Դրօշակը կեանքն է: Կեանքը առանց դրօշակի անիմաստ է:

Դրօշակը հայրենիքն է: Հայրենիքը առանց դրօշակի անապատ է:

Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
«ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ» ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔ ԷԶԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ
Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՀԵՏ

ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ. «ԱԶԳԸ, ԵԿԵՂԵՑԻՆ,
ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԻՐՈՂ ՄԱՐԴ Է
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ»

Զրուցեց՝ Լուսինե Աբրահամեանը
ԵՐԵՒԱՆ

Օգոստոսը բազմազբաղ է Հ.Մ.Ը.Մ-ի համար, նախ Բիւրա-
կանում տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ-ի հերթական բանակումը,
որին աշխարհի 18 երկրից մասնակցելու է շուրջ 800 պատանի:
Իսկ Օգոստոսի 3-5-ը կը կայանան Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական
Վարչութեան լիազուժար նիստերը:

Այս եւ այլ հարցերի շուրջ է «Հայերն Այսօր»ի զրոյցը
Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ
Մկրտիչեանի հետ:

- Հ.Մ.Ը.Մ-ն գործում է աշխարհի 26 երկրում, ունի 104
մասնաճիւղ, 10-ը՝ շրջանային մակարդակով, 16-ը՝ փոքր, ինչ-
պէս ասում են՝ մեկուսի շրջաններով: Բաւականին աշխոյժ
միութիւն է. 28 հազար անդամ ունենք ամբողջ աշխարհում:

Կը ցանկանանք, որ Հայաստանեան մեր հանդիպումներն
օգնեն Սփիւռք-Հայաստան համագործակցութեան:

Հ.Հ. Սփիւռքի նախարար
Հրանոյշ Յակոբեանի հետ
պայմանաւորուել ենք նաեւ
Օգոստոսին համագործակ-
ցութեան արձանագրութիւն
ստորագրել: Ճիշդ է, տարիներ
շարունակ մենք մեր աշխա-
տանքն անում ենք, բայց որո-
շեցինք այդ քայլն անել, քանի
որ Սփիւռքի նախարարու-
թիւնը կը դիտենք նաեւ որպէս
մեր դեսպան, իսկ տիկին Հրա-
նոյշ Յակոբեանին Սփիւռքի
միութիւնների դեսպանը
կը տեսնենք:

Վերջին անգամ Հայաստան
էինք եկել 2013 թուականի ամ-
րանը՝ մարզական խմբերով,
այս Օգոստոսին արդէն գալու

ենք սկսուտական խմբով: Ափսոս, որ Հայաստանում մարզա-
կան խմբեր չունենք եւ կը գործենք միայն սկսուտական
միութեան ճամբով: Թէեւ միջազգային կոմիտէում ներկա-
յացնում ենք Հայաստանն ընդհանրապէս:

Թէ՛ մարզական, թէ՛ սկսուտական մարզի մէջ աշխատում
ենք երիտասարդութեանն աւելի լաւ դաստիարակելու, աւելի
լաւ երիտասարդներ պատրաստելու ուղղութեամբ: Առողջ
միտք, առողջ մարմին՝ սա մեր նշանաբաններից մէկն է:

Ափսոս, որ Հ.Մ.Ը.Մ-ն միայն Սփիւռքի մէջ է զարգացել:
Ստեղծուել է 1918 թուականին, Պոլսում, յետոյ եկել է Հայաս-
տան, զբաղուել է սկզբում Յեղասպանութենէն վերապրած
փոքրերի հետ, 1921 թուականին դարձել է ետ՝ Սփիւռք:
Հ.Մ.Ը.Մ-ն մեր իրականութեան մէջ եղել եւ է՝ Սփիւռքի ամե-
նահօր եւ ամէնաուժեղ կազմակերպութիւններից մէկը:

Հ.Մ.Ը.Մ-ն մասնաճիւղեր ունի տարբեր երկրներում: Այդ
կառոյցներն այսօր կարողանո՞ւմ են միութեան գաղափարա-
խօսութիւնը, նպատակներն առաջ տանել, մանաւանդ որ հիմ-



Եղբ. Գառնիկ Մկրտիչեան Հայկական Յեղասպանութեան
100-ամեակի համահայկական մարմնի ժողովին, Երեւան:

նական աշխատանքը երիտասարդների հետ է, որոնց հետ աշխատանքն այսօր, հասկանալի պատճառներով, մի փոքր բարդացել է:

- Ես իմ խօսքերի մէջ միշտ ասում եմ, որ միակ կազմակերպութիւնն ենք, որ 3 եւ 93 տարեկանը եղբայր են միութեան մէջ, համահասարակ իրաւունքներ կը վայելեն անդամական իմաստով:

Ի հարկէ, հարցերի մէջ ունենք կազմակերպչական, զուտ վարչագիտական մօտեցում, որոնց համակարգման համար գործում են տարբեր յանձնախմբեր ու ենթախանձնախմբեր, ինչպէս՝ մարզական, այնպէս էլ սկաուտական թեւերում:

Գաղափարախօսութեան հարցը ճիշդ դրիք: Այն շատ լուրջ հարց է այսօր: Մեր նպատակը եղել է, ինչպէս ասացի՝ առողջ միտք, առողջ մարմին, այսինքն՝ երիտասարդներին հեռու պահել յուր բարքերէն: Երիտասարդները, փոխանակ այլ բաներու հետեւեն, կարող են գալ-մէկտեղուել մեր միութեան շուրջ՝ առանց որեւէ ծանր բան անելու:

Մեր նպատակը եղել է նաեւ Ազատ, Անկախ Հայաստան տեսնելը: Հիմա, որ ունենք, արդէն Միացեալի վրայ ենք աշխատում. յուսանք, որ օր մը դա էլ կը պատահի, եւ կ'ունենանք Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստան:

Այս իմաստով դժուար է ներկայ սերնդի մէջ ատիկա թափանցել: Կարելի չափով թափանցիկ ենք, կարելի չափով փորձում ենք այսօրուան մեթոտներով կրթել մեր երիտասարդներին: Լուրջ հարցերի առաջ ենք կանգնած. համաշխարհայնացում ասուածը կուլ է տալիս շատ բաներ:

Մեր միութիւնը նաեւ ազգային է. մենք զուտ սկաուտական բաժին չենք եղել, սկաուտական գաղափարներ միայն չենք կիրարկել, փորձում ենք պատրաստել նաեւ ազգային երիտասարդներ: Սկաուտ չէ, որ կը մեծացնենք, մեծացնում ենք հա՛յ սկաուտ: Հայ սկաուտ դառնալը քիչ մը աւելի դժուար է: Տարբեր երկրների մէջ զանազան միութիւններ, խմբակցութիւններ կան, որոնք կը կիրարկեն սկաուտութիւն, բայց մերը քիչ մը տարբեր բան է: Եւ կը փորձենք այդ ամէնով մենք մեզ ամուր պահել:

Օրինակ՝ Լիբանանում կան զանազան ակումբներ, իսլամ կամ քրիստոնեայ, որոնք կը կիրարկեն սկաուտութիւն, բայց կը հետեւեն միայն համաշխարհային խորհրդի օրինակներին: Մենք ունենք յատուկ ոճ, կը հետեւենք, անշուշտ, բոլոր այդ աշխատանքներին, բայց այդ ամէնը կ'անենք հայկական տեսանկիւնով: Մեր ծրագրերի առանցքն են կազմում Հայաստանը, Հայ Եկեղեցին, ազգային հիմունքները. մենք այդպէս կը դաստիարակենք:

Արարատն առանց տեսնելու՝ մեր տղաները գիտեն Արա-



րատ լեռն ի՞նչ կը նշանակէ: Հիմա, որ Հայաստանն անկախ է, շատ դիւրին է տեսնել հայրենիքը, Արարատը, բայց մեր սերունդը միայն թղթէ Արարատ է տեսել:

Ներկայ սերնդին ես միշտ ասում եմ, որ դուք բախտաւոր էք, որովհետեւ կարող էք գնալ, շօշափել հայրենի հողը, Հայաստանում կ'ապրէք նաեւ բանակումների ընթացքում:

Իսկ մեր սերունդը տարիներ շարունակ բանակումներ է կատարել Սփիւռքի մէջ, եւ մենք պաշտպան եղել ենք Եռագոյնին եւ Արարատին՝ առանց տեսնելու գայն:

Հ.Մ.Ը.Մ.ական լինելը իւրատեսակ դպրոց է յատկապէս երիտասարդների համար: Հետաքրքիր է, ապագայում տարբերում են այդ երիտասարդները:

- Աշխարհի բոլոր կողմերում կը զգաք, որ դիմացինը Հ.Մ.Ը.Մ.ական է, այսինքն՝ տարբեր ձեւով դաստիարակուած հայ է, կազմակերպչական լաւ փորձ, իմբակային դրութեամբ աշխատելու եղանակ գիտէ:

Մեր տղաները կը զանազանուեն այլոց կողմէ, բայց, անշուշտ, չեմ ասում, որ մենք հարիւրէն հարիւր տարբեր ենք: Ճիշդ է՝ Սփիւռքը քիչ մը տարբեր է, բայց այսօր Հայաստանն էլ ունի երիտասարդների հետ շփուելու դժուարութիւններ, որովհետեւ տարբեր մտածողութիւններ կան, տարբեր խնդիրներ: Որքան էլ փորձում ենք այդ ամէնը շրջանցել, բայց ձեւով մը կը տագնապինք. ժամանակին աւելի դիւրին էր, իսկ այսօր... քիչ մը դժուար:

Բայց յուսամ, որ կարելի կը լինի շրջանցել ու յաղթահարել դժուարութիւնները Հայաստան-Սփիւռք գործակցութիւններով, մեր մօտեցումներով, Սփիւռքի նախարարութեան աշխատանքով: Չպէտք է մոռանալ այն գործը, որը կատարում է Սփիւռքի նախարարութիւնը՝ աւելի մօտեցնելու Սփիւռքն ու Հայաստանը, հայրենասիրութիւնն աւելի ապրեցնելու երիտասարդութեան մէջ: Յուսամ, որ ժամանակի ընթացքում այլեւս երիտասարդները կը զգան հայրենիքի գաղափարին հաւատալու ուժը: Անոնք որոնք հոս են, հարց չունեն, բայց դուրսիները ունեն, որովհետեւ երկրորդ քաղաքացու սկզբունքով կ'ապրեն: Ժամանակին մենք ասում էինք՝ հայ ենք, յետոյ՝ լիբանանցի, հայ ենք՝ յետոյ ամերիկացի, Փրանսացի եւ այլն: Այսօրուան երիտասարդն այդպէս չի մտածում, նա արդէն ամերիկացի է, Փրանսացի: Սա շատ լուրջ հարց է, որը, համաշխարհայնացման արդիւնքում, սկսել է ուճանալ, մեծանալ: Տայ Աստուած, որ միջնորդաբար փոխուի եւ տարբեր միջնորդութիւն ստեղծուի:

Պարոն Մկրտիչեան, ասացիք, որ Օգոստոսին Հայաստանում Հ.Մ.Ը.Մ-ի հերթական բանակումն է լինելու: Կը խնդրէի, որ այդ մասին մի փոքր խօսէք:

- Ժամանակին մեր բանակումները կազմակերպում էինք Սփիւռքի զանազան գաղութներում, իսկ 1989 թուականից ի վեր կը գործենք Հայաստանի հողի վրայ: Բիւրականում ունենք մեր սեփական բանակավայրը: Ունեցանք նաեւ նոր հողաշերտ մը, որն անցեալ տարի նուէր ստացանք Հայաստանի պետութեան կողմից: Եւ այսօր, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի միջամտութեամբ եւ օգնութեամբ, «Փիւնիկ» հիմնադրամի նիւթական ներդրումով, կարողացանք նոր բանակավայրը միացնել նախորդին: Արդիւնքում՝ նախկին 450-500 սկաուտ պարփակելու փոխարէն, արդէն կ'ունենանք 800 հոգանոց լաւ բանակում: Բաւականին մեծ գործ է, տա՛յ Աստուած, որ յաջողենք: Սպասում են մասնակիցներ աշխարհի շուրջ 18 երկրից:

Բացման պաշտօնական արարողութիւնը տեղի կ'ունենայ Յուլիսի 31-ին՝ «Հանրապետութեան» հրապարակում, յաջորդ օրն արդէն մեր սկաուտները կը բարձրանան Բիւրական, կը մնան մինչեւ Օգոստոսի 9-ը: Այդ օրերի ընթացքում զանազան աշխատանքներով կը շփուեն հայրենիքի տարբեր շրջանների հողի, քարի, ջրի հետ:

Տարիքային սահմանափակումներ կա՞ն:

- Այո՛, 14 տարեկան եւ աւելի, մեր սկաուտական կարգերն այդպէս կը թոյլատրեն: Խմբապետների պարագայում երբեմն 25-ն անց տղաներ, աղջիկներ կ'ունենանք:

Այս տարուան մեր յայտագիրը բաւականին լուրջ է: Պիտի փորձենք նաեւ անպայման ունենալ Հ.Հ. պաշտպանութեան նախարարութեան զօրակցութիւնը, որպէսզի մեր պատանիներն այցելեն նաեւ զօրամասեր, սովորեն, տեսնեն, ծանօթանան հայկական բանակի կարողութիւններին, ինչու չէ՛ նաեւ հայկական բանակի աշխատանքներին:

Յոսամ, որ իւրաքանչիւր մասնակից լաւ ձեւով ու լաւ տպաւորութիւններով կը վերադառնայ իր երկիրը:

Օգոստոսի 3-5-ը Հայաստանում տեղի են ունենալու նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան լիազումար նիստերը: Կենտրոնական Վարչութիւնը կը բաղկանայ 13 անդամներից, 4-ը Լիբանանից են, միւսները՝ արտասահմանեան երկրներից, նաեւ, անշուշտ, Հայաստանից: Տարին մէկ անգամ հաւաքում ենք: Այս տարի զուգադիպեց, որ բանակումի ընթացքում պէտք է հոս լինենք: Եւ այդ ժամանակ է, որ կը քննարկենք միութեան զանազան հարցերը:



Հայաստանի սկաուտական մասնաճիւղը տարբերո՞ւմ է Սփիւռքում գործող կառույցից:

- Ներքին իմաստով ոչ մի տարբերութիւն չկայ, բայց արտաքին ճակատի վրայ, ինչպէս ասացի, մեր սկաուտները ներկայացնում են Հայաստանը եւ մասնակցում են միջազգային զանազան հաւաքների, սեմինարների: Աշխարհի չորս ծագերում նրանք տարբեր դաստիարակութիւն կը տեսնեն, որը եւ կը բերեն Հ.Մ.Ը.Մ-՝ մեզ փոխանցելու:

Մենք Հայաստանից ներկայացուցիչ ունենք Ա.Պ.Հ. տարածաշրջանի երկրների սկաուտական միութիւնում, պիտի փորձենք մեր ներկայացուցիչն ունենալ նաեւ համաշխարհային խորհուրդներում:

Ասացիք, որ կարգախօսներից մէկն է «Առողջ մարմին, առողջ միտք»: Այսօր Սփիւռքում շատ խնդիրներ կան՝ ինքնութեան, ձուլման: Զեր կարծիքով՝ այդ կարգախօսը բաւական է այդ ամէնին դիմագրաւելու համար, թէ՞ նոր գաղափարներ են պէտք:

- Կը կարծեմ, որ մեր իրականութեան մէջ Հ.Մ.Ը.Մ-ն միակ միութիւնն է, որ ստեղծեց ռազմավարական ծրագիր, թէ ո՞ւր կ'ուզէ տեսնել մեր միութիւնը յառաջիկայ 10 տարիներին: Այդ առումով բաւականին հարցեր քննարկուեցին, զանազան ժողովներ ունեցանք: Անցեալ Պատգամաւորական ժողովին, որը չորս տարին մէկ է տեղի ունենում, եւ հաւաքում են Սփիւռքի զանազան գաղութներից, ճշդեցինք նաեւ նոր ռազմավարութիւն՝ ճիշդ Զեր այս մտահոգութեանը համաձայն: Քննարկուեց, որ պէտք է փոխել մեր նախկին կառուցուածքը՝ այսօրուան երիտասարդութեանն աւելի յարմարուելու, աւելի լոգունքայինէն դուրս գալու եւ օրուան միջնուրտը յարմարեցնելու մեր միութեանական աշխատանքին՝ առանց մեր սկզբունքային արժէքներէն հեռանալու:

Յաջողո՞ւմ է:

- Քիչ մը դժուար, բայց՝ այո՛, եւ յառաջիկայ մի քանի տարիներին մենք մեր ռազմավարութիւնը լրիւ փոխած կը լինենք: Սխալ չհասկացուի, խօսքը ոչ թէ միութեան հիմնական ուղղութիւնները փոխելու մասին է, ուղղութիւնները կը մնան նոյնը, պարզապէս կը փորձենք այսօրուան երիտասարդին մօտենալու եղանակը ճշդել:

Մենք այսօր Սփիւռքի մէջ ունենք հայախօսութեան հարց նաեւ, շատ ճիշդ ասացիք, ինքնութեան հարց: Այս ամէնը մեծ գաղութների մէջ շատ չի երեւում, բայց փոքր գաղութների մէջ շատ ցցուն է, որովհետեւ շփում չունեն եւ ստիպուած օտարների հետ են շփուում, որը մեզ շատ մեծ վնաս է հասցնում:

**Հետաքրքիր է, բանակուժներում
չփման լեզուն հայերէ՞նն է:**

- Հայերէնն է, բայց կը պատահի, որ կ'ունենանք տղաք, որոնք դժուարութիւն կ'ունենան: Բայց մենք խրախուսում ենք, որ միմիանց հետ հայերէն խօսեն, թէկուզ անվարժ:

Գիտէք, մենք մեր նամակագրութիւնը, շրջաբերականները, մեր բոլոր գործունէութիւնը հայերէնով կը կատարենք: Ի հարկէ, լինում են շրջաններ, օրինակ՝ Ամերիկան, կ'օգտագործենք երկու լեզու՝ հայերէն եւ անգլերէն, որովհետեւ գիտենք, որ շատերը հայերէն չգիտեն:

Ունենք շատ աղուոր տղաներ Արգենտինայում, Հարաւային Ամերիկայում, հայ կը զգան, հայ կ'ապրեն, հայերէն կ'երգեն, բայց առանց բառերը գիտնալու, գիտեն, որ ազգային երգ է, յեղափոխական երգ է: Ցաւալի է, բայց չես էլ կարող նրանց այսպանել:

Ունենք «Մարգիկ» ամսաթերթը, նպատակ ունենք համացանցային տարբերակն ունենալ:

Եւ իմ վերջին հարցը. ի՞նչ է Ձեզ տուել Հ.Մ.Ը.Մ-ը:

- Այս միութիւնը սփիւռքահայ երիտասարդութեանը շատ մեծ բան է տուել: Անձնապէս կը կարծեմ, որ մեր հիմնական դաստիարակութիւնը, ընտանիքից յետոյ, ի հարկէ, եղել է




Հ.Մ.Ը.Մ-ն՝ իր բարոյական, գաղափարական, հայրենիքը սիրելու հասկացողութեամբ: Եւ կը փորձենք հիներէն առածը փոխանցել նոր սերնդին՝ կարողութեան համաձայն:

Ես անձնապէս շատ բան կը պարտիմ այս միութեանը: Եւ գիտեմ, որ իմ սերնդակիցները, նրանցից առաջ-լանները նոյն զգացումը ունեն: Եւ չկայ Հ.Մ.Ը.Մ-ական, ով ուրիշ բան կ'ըսէ, անկարելի է, չէք գտնի, որ ասի՝ ես այս միութիւնից չեմ օգտու-

ւել: Ընդհակառակը, իբրեւ մարդ իր պատրաստութեան մէջ շատ բան սորված է միութիւնից, միութեան մէջ: Ազգը, եկեղեցին, հայրենիքը սիրող մարդ է Հ.Մ.Ը.Մ-ականը:

Մենք ունեցել ենք ծնողներ, ովքեր իրենց զաւակներին լաւ չեն հետեւել, բայց այդ զաւակները մեր միութեան մէջ լինելով՝ իրենց ծնողներին դաստիարակել են: Սա մի օրինակ է միայն...

Եւ որպէս վերջաբան՝ շատ ուրախ եմ, որ ձեզի հետ տեսնուեցայ, ուզում եմ շնորհակալութիւն յայտնել Սփիւռքի նախարարութեանը: Չեմ ուզում թերագնահատել ուրիշներին, բայց գոնէ իմ ճանաչած մարդկանցից Հրանոյշ Յակոբեանն այն անձն է, ով մեծ ներդրում է կատարում իր բոլոր ընթացիկ աշխատանքների մէջ:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ԼՍԵՑԷՔ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԶԱՆԳԵՐՈՒՄ ԴՕՂԱՆԶԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ)

28 Մայիս 1918՝ օր վերածնունդի ու յաղթանակի:

28 Մայիս՝ օր ինքնորոշման ու վճռակալության:

Մեր ապագայատեսիլ հերոսները Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը կերտեցին, որովհետեւ ունէին ամրակուռ հաւատք իրենց ազգային ըմբռնումներուն մէջ, տենդագին սէր՝ իրենց ժողովուրդին նկատմամբ եւ արտակարգ նուիրում, զոր փաստեցին իրենց կեանքով, երբ կեանք տուին հայոց պատմութեան նորագոյն հրաշքին՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի համազգային գաղափարին:

Այսօր, իւրաքանչիւր հայորդի, Արարատի վեհաշուք պատկերը իր աչքերուն, նոյն օճախին մէջ ծնելու եւ ապրելու բախտէն զրկուած, իրարմէ հեռու, բայց հոգեպէս մէկ ամբողջութիւն կազմած՝ աշխարհի տարածքին միասնաբար կը կրկնէ ցեղին նոյն երգը՝

- Չանգե՛ր, դօղանջէք,
- Սրբազան քաջերին կանչէք
- Այս արդար պատից:
- Սերունդնե՛ր, դուք ձեզ ծանաչէք,
- Սարդարապատից:

Արդարեւ, տօնախմբութիւնները կը դառնան միջոց Հ.Մ.Ը.Մ.Ի առաջադրած վեհագոյն նպատակի իրագործումին:

Այս հզօր միութեան մեր անդամակցած օրէն իսկ քաջ գիտենք, թէ՛

Դաշտ ունենանք թէ՛ ոչ ախոյեան պիտի տանք:
Բանակատեղի ունենանք թէ՛ ոչ պատասխանատու պիտի տանք:

Հաւաքատեղի ունենանք թէ՛ ոչ վարչական պիտի տանք:

Վկայ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան բազմահազար էջերը:

Վկայ՝ որբանոցէն ծնած այս հզօր միութիւնը, որ աշխարհի բոլոր ցամաքամասերուն մէջ կը գործէ իր



105 մասնաճիւղերով, Եռագոյն դրօշին ներքոյ ամէնուրեք եւ ամէն ժամ ստեղծելով «Նոր Հայաստան» մը, նորահաս սերունդին ջամբելով հայեցի ու կրօնաբարոյական դաստիարակութիւն: Հայ պատանիին ու երիտասարդին հոգին, միտքը, մարմինը կերտող այս մեծ դպրոցը միաժամանակ անոնց կ'աւանդէ միութեան նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացո՛ւր»ը, որ կը մարմնաւորէ գերակշիւրը, այսինքն՝ իր անձէն առաջ եւ իր անձէն ետք իր նմանին ծառայելու նուիրական ոգին ու յանձնառութիւնը, ամբողջակա՛ն հաւատարմութիւնը:

Վերջին տասնամեակին, մեր առօրեայ բաւամթերքին մէջ աւելցաւ նաեւ մեզ նոր զոհողութիւններու հրաւիրող «մարտահրաւէր» բառը: Հակառակ անոր որ այս կոչը ամէնօրեայ իրողութիւն ըլլալէ չի դադրիր, յատկապէս մեզի՝ Միջին Արեւելեան մեր բնակավայրերուն մէջ, ուր կը տիրեն զինուորաքաղաքական դառն օրեր, ուր անապահովութիւն կը շնչենք ամէնուրեք: Անցեալին, մենք ազգովին յաջողեցանք շրջանցել մարտահրաւէրներուն մարտահրաւէրը՝ Յեղասպանութեան, տարագրութեան արհաւիրքը, որոնք մեզ



խլեցին մեր արմատներէն եւ սակայն մենք ազգովին անտեսեցինք մահը, որովհետեւ միշտ ապրեցանք նոյն խանդով ու միեւնոյն ըստեղծագործ հաւատքով: Այսպէս է նաեւ մեր ներկան, տարրեր չի կրնար ըլլալ նաեւ ապագան: Հետեւաբար, պէտք է ձգտիլ նպատակասլաց կեանքի, յարատեւ պայքարի եւ մեր պահանջատիրութիւնը միշտ կենդանի պահելու նպատակակէտին:



Լսեցէ՛ք Սարգարապատի զանգերուն ղօղանջը, որ աշխարհացրիւ իւրաքանչիւր հայու կը թելադրէ՝

- Պահպանել հայ լեզուն, հայ մշակոյթը, հայկական արժէքները, աւանդութիւններն ու ազգային ինքնուրոյն նկարագիրը:

- Հետապնդել մինչեւ վերջին շունչ մեր՝ հայ ժողովուրդի արդար եւ անժամանցելի դատը:

- Յամառօրէն պայքարիլ դժուարութեանց դէմ՝ Հայկերու վճռականութեամբ եւ Վարդաններու խիզախութեամբ:

Եկէ՛ք, ուրեմն, միասնաբար հաստատաքայլ ընթանանք դէպի մեր պայծառ ապագային հորիզոնները, առաջնորդը՝ մեր նահատակներէն ժառանգած կտակով եւ ուխտով, որոնք պիտի լուսաւորեն մեր եւ ներկայի, եւ ապագայի ուղին, մինչեւ իրականացումը մեր մեծ երազին՝ Ազատ, Անկախ, Ամբողջական եւ Միացեալ Հայաստանին:

Քայլ յառա՛ջ, օ՛ն...

- Միասին զգալ, միասին մտածել, միասին գործել, միասին յառաջ ընթանալ եւ միասին բարձրանալ բարձունքէ բարձունք:

- Անշահախնդրօրէն մասնակցիլ հայրենիքի վերելքի համազգային ճիգերուն եւ հայրենիքը միշտ ամէն բանէ գերիվեր ու վեհ դասել:

- Միախառնել մեր կեանքը Արցախեան ազատագրական պայքարի լուսաշող ապագային:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating/air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer. The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Տոթթ. Շահէ Ենիգոմշեան
ԼՈՍ ԿԱԹՈՍ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ



Հայեցի դաստիարակութիւնը կը հանդիսանայ մեր ազգային օրակարգի կարեւորագոյն կէտերէն մէկը: Այս գծով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կազմակերպած է համասփիւռքեան կրթական երեք համագումարներ, վերջինը՝ 2011-ին, ուր ներկայացուած են յստակ առաջադրանքներ⁽¹⁾: Դաստիարակներ ու մտաւորականներ պարբերաբար բոլորիս ուշադրութեան կը յանձնեն այս հարցին կարեւորութիւնը եւ հայ լեզուի նահանջի ու հայկական վարժարաններու դժուարութիւններուն մասին ախտաճանաչումներ կը կատարեն: Նկատելին այն է, սակայն, որ հայեցի դաստիարակութեան պատկերացումներուն եւ առաջադրանքներուն առանցքն ու ծիրը հիմնականօրէն եղած են հայ դպրոցին կարեւորութիւնը, ուսուցչական մարդու զարգացումը եւ արեւմտահայերէնի նահանջը: Դպրոցներէ դուրս հայեցի դաստիարակութեան կարեւորութիւնն ու քննարկումը լուսանցքային խօսակցութեան նիւթ է միայն:

2013-ին, Արեւմտեան Մ. Նահանգներու Ազգային Առաջնորդարանին կողմէ կեանքի կոչուեցաւ յանձնախումբ մը՝ հայախօսութիւնը եւ հայերէնի գրաւոր գործածութիւնը վերաշխուժացնելու նպատակով սերտողական աշխատանքի մը ձեռնարկելու համար⁽²⁾:

Դեկտեմբեր 2013-ին հրապարակուեցաւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքին հնգամեայ ծրագիրը, որուն առաջնահերթութեան առաջին բնագաւառն է՝ «Ձարկ տալ հայերէնի ու հայ մշակոյթի պահպանումին եւ Սփիւռքի զարգացումին՝ իրարու կամրջելով Սփիւռքի տարբեր հատուածները եւ ուժերը ներդնելով կրթութեան ոլորտին մէջ»⁽³⁾: Քանի մը ամիս առաջ, «Հայեցի դաստիարակութիւնը եւ մեր կառուցներու առաքելութիւնը» խորագրով յօդուածը⁽⁴⁾ քննարկումի տակ առաւ այս նիւթը: Նաեւ շատ հետաքրքրական նամականի-գրոյցի մը առիթը տրուեցաւ «Ազդակ»ի էջերէն, արեւմտեան աշխարհի մէջ հայերէն լեզուի գործածութեան գծով⁽⁵⁾: Օգտակար էր նաեւ լսել «UCLA-ARPA Institute»ի դաստիարակչական նոր Մկնիկի փորձառական օրինակը եւ «Մշակութային ինքնութիւն եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններ» նիւթով կազմակերպուած համագումարին արտայայտուած տե-

սակէտները⁽⁶⁾: Մեր կարծիքով, Սփիւռքի մէջ, հայեցի դաստիարակութեան մտահոգութիւններու գործնական մօտեցումը կը պահանջէ կեդրոնացում երկու հարցի վրայ.- Ի՞նչպէս նոր դաստիարակ-ուսուցիչներ պատրաստել եւ ի՞նչպէս աւելի մեծ թիւով մանուկ-պատանիներ դաստիարակել: Առաջին հարցը թէեւ շատ էական է, սակայն այս յօդուածին ծիրէն դուրս է: Երկրորդ կէտը այս յօդուածին խթանն է, որովհետեւ հայեցի դաստիարակութիւնը միայն հայկական վարժարան յաճախելով պէտք չէ սահմանուի, այլ պէտք է ներառնէ նաեւ դպրոցի պատերէն դուրս տրուող դաստիարակութիւնը:

Հայեցի դաստիարակութիւնը ունի երկու տարբեր, բայց իրարու լրացուցիչ երեսներ՝ դպրոցական եւ արտադպրոցական: Վերջինին դերը միշտ նուազ գնահատուած է: Տրուած ըլլալով որ Հ-Մ-Ը-Մ-ը գործօն ձեւով այս հարցին համար լուծումներ քննելու աշխատանքին մէջ է, այս յօդուածով կ'ուզենք արտադպրոցական հայեցի դաստիարակութեան կարեւորութիւնը ընդգծել եւ ապա բացատրութիւններ տալ, այն ինչ կը վերաբերի Հ-Մ-Ը-Մ-ին, իր արտադպրոցական նախաձեռնութիւններով, հայեցի դաստիարակութեան մէջ իր ունեցած դերակատարութեամբ:

ԻՆՉՈ՞Ւ ԱՐԾԱՐԾԵԼ ԱՅՍ ՆԻՒԹԸ

Շատերու համար, Սփիւռքի մէջ հայկական ինքնութիւն պահելու անհեթեթ եւ ի գուր է: Նման մտածելակերպով անձեր կրնան դադրեցնել այս յօդուածին ընթերցումը: Այս յօդուածով Հայաստանի Հանրապետութեան կամ Սփիւռքի հզօրա-

ցումի առաջնահերթութեան հարցը չէ որ կը քննուի: Կասկած չկայ, որ թէ՛ ներկայիս եւ թէ՛ ապագային իսկական առաջնահերթութիւնը Հայաստանի իրավիճակին բարելաւումն ու հզօրացումն է: Սակայն, Սփիւռքի մէջ հայեցի դաստիարակութեան ամրապնդումը, նոյնիսկ եթէ էականօրէն միայն երկու սերունդի համար, իմաստալից նպատակակէտ է եւ իր ուղղակի թէ՛ անուղղակի օգտակարութիւնը ունի Հայաստանի ներկայ եւ ապագայ իրավիճակին բարելաւման մէջ:

Ուրեմն, հարցը կը վերաբերի Հայաստանէն դուրս, ի մասնաւորի արեւմտեան Սփիւռքի մէջ հայկական ինքնութիւնը պահելու եւ հայեցի ոգի փոխանցելու անհրաժեշտութեան:

Առաւել պէտք է յստակացնել, որ Սփիւռքի մէջ հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութիւնը կամ կարեւորութիւնը չէ որ քննարկումի կը կարօտի, այլ՝ լաւագոյն արդիւնքի հասնելու համար ռազմավարութեան մը եւ ուղեգիծի մը մշակումը: Կարեւոր է այդ դաստիարակութիւնը յաջողցնելու գործնական գանազան միջոցները յայտնաբերել, դերակատար կառոյցներու պարտականութիւնը սահմանել եւ, եթէ կարելի է, աշխատանքային ուղեգիծ մը մշակել:



ոգիի կերտում:

2- Երկրորդ՝ հայ լեզուի, մշակոյթի եւ գրականութեան գիտելիքներու ուսուցում՝ յառաջացնելու «Տնօրէն», «Քաջատեղեակ» եւ «լայնօրէն ծանօթ հայ մշակոյթին» հայր:

3- Երրորդ՝ հայերէնագիտութիւն իր երկու բաժիններով՝ հայախօսութիւն եւ կարգալու ու գրելու կարողութիւն:

Ի՞ՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՀԱՅԵՑԻ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Դասական իմաստով, հայեցի դաստիարակութիւնը կ'ենթադրէ որ անհատը.-

- Հմուտ ըլլայ հայերէն լեզուին:
- Քաջատեղեակ՝ հայոց պատմութեան, Հայ Եկեղեցւոյ դաւանանքին ու անոր պատմութեան:
- Լայնօրէն ծանօթ՝ հայ մշակոյթին:
- Իրագեկ՝ հայ ժողովուրդի ներկայ իրավիճակին ու այսօրուան խնդիրներուն
- Եւ, վերջապէս, հաւատացող ու յանձնառու՝ հայութեան ապագայ երազներուն եւ Հայաստանի նպատակներուն:

Մեր կարծիքով, սակայն, դասական այս մօտեցումը պէտք է փոխարինել նորարար մօտեցումով մը: Հայեցի դաստիարակութիւնը յղացքին աւելի այժմէական սահմանումը հայկականութիւնը անձի մը գիտակցութեան մէջ դարբնելու անհրաժեշտութիւնն է. հայերէն լեզուի գիտութեան գուրգահեռ, թէ՛ գիտակցուած եւ թէ՛ հոգեբանական մտածողութիւն է, այսինքն՝ հայ ըլլալու իրողութեան հետ հաշտ եւ հպարտ ըլլալն է: «Ան կը նշանակէ հայկական արեւելում ունեցող կրթութիւն, որ կը կառավարէ անհատին մտածողութիւնը, հարցերու մօտեցումը, առաջնահերթութիւններու եւ կեցուածքներու ճշդումը»:

Հայեցի դաստիարակութիւնը անհրաժեշտ է սահմանել հետեւեալ երեք բաղադրիչներով.-

1. Առաջին կարգին՝ հայ ըլլալու գիտակցուած եւ հոգեբանական մտածողութիւն, այն ինչ որ պիտի կոչենք հայկական

ՆԵՐԿԱՅ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՄԱՆ ԵՒ ՀԱՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Անցեալին, հայեցի դաստիարակութիւնը կ'ենթադրէր անպայման հայկական վարժարան յաճախել եւ Տնօրէն հայախօս ըլլալ: Պատմականօրէն, հայ դպրոցը եղած է հայեցի ուսման դարբնոցը: Ներկայիս, շատերու տեսակէտը, մանաւանդ այս հարցով մտահոգ անձերու հաստատումը եւ դասական արտայայտութիւնը ընդհանրապէս այն է, որ այսօր Սփիւռքը վտանգուած է եւ մեծագոյն վտանգը լեզուի կորուստն է, որուն պահպանման համար անընդունելիօրէն ցուցաբերուած է թափափած մօտեցում: Ընդհանուր տեսակէտը այն է, որ առանց լեզուին եւ անով ստացուող ժառանգութեան ազգային դիմագիծ չի կերտուիր: Երկու միջոց՝ դպրոց եւ գիրք միայն կրնան փրկարար դեր կատարել: Հետեւաբար, կարեւոր է Սփիւռքի(ներու) մէջ հայկական բարձրորակ վարժարաններու հիմնումը եւ բազմացումը՝ միշտ նպատակ ունենալով, որ մէկ հատիկ հայ տղայ օտար վարժարան չյաճախէ(7):

Բնական է, որ Սփիւռքի մէջ հայկական վարժարաններու բազմացումը մեծապէս պիտի օգնէ ազգային դիմագիծի պահպանման, բայց այս օրերուս Սփիւռքի հայկական համայնքներու իրավիճակը նոյնը չէ: Իրողութիւնը այն է, որ արեւմտեան Սփիւռքի մէջ հայկական վարժարան յաճախող ուսանողութեան տոկոսը հինգ առ հարիւր է, իսկ հայկական

կազմակերպութիւններու անդամակցութեան տոկոսը՝ ոչ աւելի քան տասը առ հարիւր⁽⁶⁾։

Այս թիւերը կը ներկայացնեն այսօրուան կացութիւնը, որուն հիմամբ Սփիւռքի ներկայ (եւ ապագայ) սերունդներու մեծամասնութեան համար հայկական վարժարաններու մէջ ուսումը գործնականօրէն կիրարկելի չէ։ Այո, կարելոր են Սփիւռքի(ներու) մէջ հայկական բարձրորակ վարժարաններու հիմնումը եւ բազմացումը, բայց այն առաջադրանքը, որ «մէկ հատիկ հայ տղայ օտար վարժարան չյաճախէ» գործնական ռազմավարութիւն ըլլալ չի թուիր։ Այդ առաջադրանքը գործադրելու համար ո՛չ նիւթականը, ո՛չ ալ մարդու չի պահանջը կարելի պիտի ըլլայ հայթայթել։ Իսկ ինչ կը վերաբերի այդ դաստիարակութիւնը տալու միջոցներուն, հայկական վարժարաններու կատարած անցեալի ազդեցութիւնը կարելի չէ վերականգնել (Կրկնենք, որ բոլորովին այլ հարց է ուսուցիչ-դաստիարակ պատրաստելու եւ, հետեւաբար, հայագիտական հիմնարկ հաստատելու հարցը)։

Հարցերը եթէ խորապէս եւ իրապաշտութեամբ քննենք պիտի ընդունինք, որ հայեցի դաստիարակութեան հրամայականը այլեւս չի կրնար ենթադրել անպայման հայկական վարժարան յաճախել եւ հմուտ հայախօս ըլլալ։ Աւելին, պէտք է ընդգծել, որ արեւմտեան Սփիւռքի տուններուն մէջ հայերէնը որպէս խօսակցական լեզու գործածելը առաւելաբար երկրորդ լեզու է՝ քան մայր լեզու, իսկ հայերէն խօսող, կարդացող եւ գրող գտնելը այլեւս հագուագիւտ երեւոյթ է։

Պէտք է այլեւս ընդունիլ եւ հաստատել, որ հայեցի դաստիարակութեան առողջ քաղաքականութիւնը գիրար ամբողջացնող երկու երես ունի։ Լաւագոյնը հայկական վարժարաններու մէջ դպրոցական ուսումն է, իսկ գործնականը՝ առաջինին կողքին արտադպրոցական հայկական ծրագրի մը մշակումը եւ իրագործումը։ Հայ մարդը կրնայ հմուտ հայախօս ըլլալ, բայց լաւ հայ չըլլալ։ Կրնայ նաեւ հայերէն չգիտնալ, բայց շատ լաւ հայ ըլլալ։ Իտէալը՝ երկուքին համադրութիւնը ունենալն է, բայց երբ իտէալը կերտելու անկարելիութեան դիմաց ենք, հայերէնի հմտութեան անկումը պէտք է փոխարինենք գիտակցուած հայկականութեան աճով։ Սորվեցնենք հայերէնը հայկական վարժարաններու միջոցով, բայց ընդունինք որ գաղութային լայն խաւի մը համար առաջնահերթ եւ կարելոր է, առանց անպայման հայերէնի մէջ հմուտ ըլլալու, գիտակցուած հայկականութեամբ ապրելու կարելիութիւնը։ Այսօր բազմաթիւ են օրինակները ազգային ոգիով եւ դիմագիծով այն նուիրեալ հայերուն, որոնք հայախօս չեն, հայկական վարժարան չեն յաճախած, բայց հպարտ եւ յանձնառու հայեր են։ Եթէ շարունակենք անտեսել Սփիւռքի ոչ հայախօս, բայց նոյնքան ազգասէր փաղանգը, եթէ անտեսենք տեղական կենսաձեւին համարկուած հայ պատանիները, եթէ զանոնք միայն քննադատենք եւ զիրենք կոչենք գունաթափ կամ անտարբեր, սակայն շարունակենք պայքար խրատել՝ առանց

լուծումներ առաջարկելու, այդ պարագային ոչ մէկ յառաջդիմութիւն արձանագրած կ'ըլլանք։

Ուրեմն, պէտք է ծրագրուած կերպով հայեցի դաստիարակութեան միջոցները զարգացնել եւ մտածել հինգ առ հարիւրէն անդին, դպրոցական գրասեղաններէն անդին երթալով։ Այլ խօսքով՝ արտադպրոցական հայկական արեւելումով նախաձեռնութիւնները պէտք է բազմաձև եւ հայեցի դաստիարակութեան մէջ ունենան աւելի յստակ ռազմավարական դերակատարութիւն, արժեւորումի եւ արդիւնքներու վրայ հիմնուած մշակոյթով, ինչ որ կը նշանակէ մտածելակերպի եւ աշխատանքային ձեւերու բարեփոխութիւն՝ մանաւանդ մարդու եւ նիւթականի առնչութեամբ ։

Ո՞Վ ՊԻՏԻ ԶԲԱՆԻ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Սփիւռքի մէջ նոր սերունդը ի՞նչպէս կրնայ հայ ըլլալ եւ հոգիով հայ մնալ։ Ո՞վ պէտք է ստանձնէ նոր սերունդին հայեցի դաստիարակութիւն տալու պարտականութիւնը։ Ինչպէս անցեալին, ապագային ալ, ծնողք, ուսուցիչ, եկեղեցի, կազմակերպութիւններ հաւաքաբար։ Այդ պիտի կատարուի հայկական վարժարաններու մէջ՝ ուսման գիտելիքներու ճամբով, արտադպրոցական ձեռնարկներով, մամուլով, կազմակերպութիւններու ճամբով եւ ակմբային ու եկեղեցական կեանքի նախաձեռնութիւններով։ «Առարկայական գիտելիքները պիտի ամրապնդուին ենթակայական միջոցներով, ընտանիքէն ներս, անհատական հարցերէն անդին՝ հաւաքական կեանքի մասին խօսակցութեամբ, ազգային տօներու նշումով եւ աւանդութիւններու պահպանման ճամբով»։

Հայ լեզուի իւրացումը, նոյնիսկ անոնց համար որոնք հայկական վարժարան կը յաճախեն, չի կրնար սահմանափակուիլ դպրոցով։ Լեզուի մը իւրացումը նոյնքան եւ աւելի կը պահանջէ դպրոցի միջավայրէն դուրս, մասնաւորապէս տան մէջ, յաճախակի գործածութիւն։ Ընտանեկան դաստիարա-



կուլթիւնը հայախօսութեան հիմնաքարն է, բայց իրականութիւնը այն է, որ արագօրէն փոխուող այս աշխարհին մէջ, ծնողներու ներդրումը հայեցի դաստիարակութեան գործին շատ նուազած է: Տակաւին կան նուիրեալ ծնողներ, որոնք կը յաջողին հայերէն լեզուն սիրելի դարձնել իրենց զաւակներուն եւ տան մէջ հայերէնը գործածել իբրեւ առաջին լեզու: Դժբախտաբար, սակայն, մեծամասնութիւնը տեղի տուած է: Ուրեմն, հայ հասարակութեան մեծամասնութեան համար հայեցի դաստիարակութեան եւ հայախօսութեան ուսուցումը կ'իյնայ դպրոցներու եւ այլ կառույցներու ուսերուն: Ինչպէս արդէն հաստատուեցաւ, հայկական վարժարաններու կատարած անգին աշխատանքը դժբախտաբար վերապահուած է աշակերտական տարիքի սերունդին փոքր համեմատութեան: Մընացեալին հայեցի դաստիարակութեան պատասխանատուութիւնը ինկած է արտադպրոցական կառույցներու ուսերուն, որոնք կարծէք սակայն անգիտակից են այդ պարտականութեան, ազգային մակարդակով հայեցի դաստիարակութեան ռազմավարութեան մը չզոյւլութեան պատճառով:

Որո՞նք են արտադպրոցական այդ կառույցները: Հայաստանի անկախութենէն ետք, մեր գաղութներու մէջ ի յայտ եկան անհատական զանազան նախաձեռնութիւններ, երբեմն նոր կառույցներ: Այս կառույցները բարեսիրական կարեւոր օժանդակութիւն կու տան հայրենիքին եւ առիթ կ'ընծայեն Սփիւռքէն որոշ թիւով երիտասարդներու, որպէսզի Հայաստան այցելեն: Այս կառույցներն ու նախաձեռնութիւնները, անկասկած, այնպէս ինչպէս իրենց կողմէ սահմանուած են, լեզուի պահպանումի հետ առնչուած չեն: Նաեւ, այս նախաձեռնութիւններու մասնակից երիտասարդներուն թիւը տակաւին փոքրամասնութիւն է: Բարձր գնահատելով հանդերձ նման նախաձեռնութիւնները, երբ կը խօսինք արտադպրոցական հայեցի դաստիարակութիւն ջամբելու միջոցներու մասին, գործնականօրէն կը խօսինք մեր վերջին հարիւր տարւան Սփիւռքի գաղութներու աւանդական կազմակերպման դրութեան, այսինքն՝ եկեղեցի-առաջնորդարանի, կուսակցութիւններու եւ բարեսիրական-մշակութային-մարմնակրթական-ընկերային կազմակերպութիւններու կատարած աշխատանքին մասին:

ԱՐՏԱԴՊՐՈՅԱԿԱՆ ՕՃԱՆՆԵՐ

Դասական օճախներն ու կառույցները, որոնց կարգին՝ հայ եկեղեցին եւ եկեղեցւոյ շաբաթօրեայ դպրոցները, երի-



տասարդական կառույցները (օրինակ՝ ACYO), կուսակցութիւնները, կուսակցական երիտասարդական եւ պատանեկան միաւորները, Հ.Մ.Ը.Մ-ը, Համազգայինը, Հ.Բ.Ը.Մ-ը եւ այլ անկախ կառույցներ կը մնան Սփիւռքի մէջ արտադպրոցական հայկական ոգի դարբնող հիմնական կուուանները: Ոմանք նաեւ հայ լեզուն գրելու, կարդալու եւ խօսելու ուսուցում կը ջամբեն, ինչպէս օրինակ՝ Հայ Օգնութեան Միութիւնը⁽⁹⁾: Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ, ՀՕՄ-ը ունի տասնհինգ շաբաթօրեայ եւ միօրեայ դպրոցներ՝ մօտ 750 աշակերտներով: Արեւելեան Մ. Նահանգներու եւ Եւրոպայի մէջ (մանաւանդ՝ Ֆրանսա), ՀՕՄ-ը ունի քանի մը տասնեակ շաբաթօրեայ դպրոցներ: Թէ՛ էջմիածնական եւ թէ՛ Կիլիկիոյ թեմի եկեղեցիները առիթը կ'ընծայեն շաբաթօրեայ դպրոցներով հայերէն լեզուի ուսուցման: Հ.Բ.Ը.Մ-ն ալ ունի ամէնօրեայ դպրոցներ⁽¹⁰⁾: Կան նաեւ այլ կառույցներ, օրինակ՝ Փարիզի մէջ կը գործէ Մկնիկ դաստիարակչական հիմնարկը, որուն մանկավարժական մօտեցումը հիմնուած է ո՛չ թէ ուսուցիչներու, այլ՝ դիւրացնող դաստիարակներու (facilitator) վերահսկողութեան վրայ:

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը, իր կարգին, մշակութային կրթութեամբ եւ հայեցի դաստիարակութեամբ զբաղող կարեւոր միութիւն մըն է: Համազգայինի կառույցին կապուած կան երեք ամէնօրեայ եւ բազմաթիւ միօրեայ դպրոցներ: Կան նաեւ արուեստի բազմաթիւ միօրեայ դպրոցներ եւ կեդրոններ: Համազգայինը ունի հայերէնագիտական նիւթերու սփիւռքահայ ուսուցիչներու պատրաստութեան ծրագիր (մանկավարժութիւն կ'ուսանին -BA- Համազգայինի



հաշուոյն, ապա Հայաստան հայագիտութիւն կ'ուսանին -MA- Համազգայինի հաշուոյն: Ապա կը վերադառնան եւ կ'աշխատին որպէս ուսուցիչ): Համազգայինը տակաւին չունի երիտասարդական խումբերէ կազմուած կառոյցներ, բայց կը քաջալերէ կազմութիւնը մշակութային կամ կրթական հետաքրքրութիւններ ունեցող խումբերու («Միաւորներ»), որոնց մեծամասնութիւնը վստահաբար պիտի ըլլան երիտասարդական խումբեր (բայց ոչ տասնվեց տարեկանէն վար)⁽¹¹⁾:

Արհեստագիտական նորարութիւնները եւ նախաձեռնութիւնները եւս հասանելի են այսօրուան հայ երիտասարդութեան, ըլլալ համացանցային թէ առցանց համախմբումներու դասընթացներով: 2004 թուականէն սկսեալ Հ.Բ.Ը.Մ.ի Armenia Virtual College-ը առիթ կ'ընծայէ հայ լեզուի, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի ուսուցման, համալսարանական կամ աւելի հասուն տարիքով ուսանողներու համար⁽¹²⁾: Բոլորին հասանելի դասաւանդութեան այս ձեւը եւ հեռուստուցման իւրաքանչիւր այս միջոցը արտադպրոցական դաստիարակութեան նոր հորիզոն մը կը բանայ: Հայերէնի ուսուցման այս նոր ձեւը ժամանակի ընթացքին, անկասկած, որ աւելի պիտի զարգանայ, բայց փոքր տարիքէն հայկական ապրում սփռող եւ դէմ առ դէմ դաստիարակութեան հոլովոյթի անհրաժեշտութիւնը պիտի չվերանայ: Անկասկած, որ դասական կառոյցներու պահանջը պիտի շարունակուի, իր ընծայած դաստիարակչական հին կամ նոր միջոցներով:

Հայկական միջնորոտ ստեղծող վերոնշեալ կառոյցներէն

եւ կազմակերպութիւններէն իւրաքանչիւրը ունի իր իւրաքանչիւր օգտակարութիւնը: Բոլորին համար ալ որակաւոր եւ յանձնառու հայ պատրաստելը ամէնէն կարեւոր նպատակն է: Հարցը այն է, թէ նոյն առաքելութիւնը հետապնդող, նոյնիսկ ուղեկից կազմակերպութիւններու միջեւ համագործակցութիւն առհասարակ գոյութիւն չունի: Առաւել, այսօրուան մարտահրաւէրը բոլորին համար ալ նոր անդամներ ներգրաւելն է: Մեր շրջանակներէն հեռու, ոչ-հայկական դպրոց յաճախող պատանիներու ներգրաւումը հիմնական է: Կարեւոր է կարկինը լայնցնել եւ ներգրաւել ցարդ հայկական շրջանակներէ հեռու մնացած կամ «պահուրտած» պատանի-երիտասարդները:

Հայեցի դաստիարակութեան մեր մօտեցումը պէտք է բարեփոխել: Շարունակելով ընդգծել հայկական վարժարաններու կարեւորութիւնը եւ աշխատելով նպաստել այդ առաքելութեան, այսուհետեւ բարոյական եւ նիւթական օժանդակութիւն պէտք է ապահովել նաեւ արտադպրոցական նախաձեռնութիւններու, կապուած՝ աշակերտական տարիքի մանուկ-պատանիներու լեզուի պահպանման: Շեշտը պէտք է դնել հայկական ոգին զարգացնող մշակոյթի եւ լեզուի հետ կապ ունեցող արտադպրոցական աշխատանքներու վրայ, համայնքի կառոյցներու թէ՛ աւանդական ծրագիրներու միջոցով եւ թէ՛ վերամշակուած նոր նախաձեռնութիւններով, որպէսզի կարկինը ընդլայնի եւ հայեցի դաստիարակութիւն ջամբուի աւելի մեծ թիւով ծագումով հայերու: Վերջապէս,

with the complements of

Restaurant Al-Mayass

չափազանց կարեւոր է նաեւ կարգ մը ուղեկից կազմակերպութիւններու միջեւ աշխատանքային համագործակցութիւն ստեղծելը:

(Շար. 1)

Յաջորդիւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի հայեցի դաստիարակութեան ազգային առաքելութիւնը եւ դերակատարութիւնը)

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1) <http://www.armenianorthodoxchurch.org/old-archives/v04/doc/Conferences/conf20.htm>
- 2) <http://asbarez.com/arm/186020>
- 3) <http://www.gulbenkian.pt/inst/en/Activities/-ArmenianCommunities> ՀՆԳԱՄԵԱՅ ԾՐԱԳԻՐ- Յանուն կենսունակ ապագայի մը:

4) <http://www.horizonweekly.ca/article/details/116> Վիզէն Թիւֆէնկեան:

5) <http://www.aztagdaily.com/archives/167802>, <http://aztagdaily.com/archives/171511#>.UvuWRVti1ec.email, <http://www.aztagdaily.com/archives/173156#>.UvuLPnqBpKI.email

6) <http://youtube/6ottuLDrz2Q>: A new pedagogical approach to transmitting the Armenian language in the Diaspora: a Case Study of Mgnig educational workshop, by Korioun Khachadourian

7) <http://www.aztagdaily.com/archives/165420>

8) Լաւատեղեակ աղբիւրներէ հաւաքուած:

9) <http://asbarez.com/117870/ars-one-day-schools-a-vital-link-to-cultural-understanding/>

10) <http://agbu.org/education/schools>

11) Համազգայինի կեդրոնական Վարչութիւն:

12) <http://agbu.org/education/Armenian-virtual-college/>

ԴԻՄՔԵՐՈՒ ՀԵՏ

ԼԱԹԱՔԻՈՅ ՀԱՒԱՏԱՒՈՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ԱԼԵՏԻՍ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆԸ

Արմէն Բեռլիներեան ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ական հաւատաւոր ու խոնարհ սերունդի մը ներկայացուցիչներէն մէկն է եղբ. Ալետիս Տէյիւրմէնճեան: Ան ծնած է Լաթաքիա, 1932-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Լաթաքիոյ Նահատակաց վարժարանը, այնուհետեւ մտած է աշխատանքի ասպարէզ եւ դարձած է վարպետ արհեստաւոր:

12 տարեկանին ան դարձած է Հ.Մ.Ը.Մ.ի պարտաճանաչ սկաուտ, ապա եղած է Ֆուլթայոլի խումբի մարզիկ: 1948-էն սկսեալ մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի միջմասնաճիւղային բոլոր տողանցքներուն: 1958-ին, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ Ֆուլթայոլի խումբի պատասխանատու, եղբ. Ալետիս արժանացած է տարուան բաժակին: 1953-էն ան նուիրուած է ազգային ծառայութեան գործին: Եղած է հիմնադիրներէն մէկը Համազգայինի Լաթաքիոյ «Համօ Օհանջանեան» մասնաճիւղին եւ դարձած է անոր ատենապետը: Երկար տարիներ եղած է Լաթաքիոյ Ազգ. Նահատակաց վարժարանի հոգաբարձու, նաեւ՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական խորհուրդի անդամ:

Բնաւորութեամբ եղբ. Ալետիս շատ հեզ է, կարգա-

պահ, բծախնդիր եւ ծառայասէր: Ան իր հանդարտ ու խոհեմ ցուցմունքներով միշտ օգտակար դարձած է շրջապատին, մանաւանդ՝ երիտասարդներուն: Երկար տարիներ, երբ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի մարզական խումբերը Լաթաքիա կ'այցելէին՝ կ'արժանանային եղբոր շատ ջերմ ու խանդավառ ընդունելութեան:



Եղբ. Ալետիս, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ ներկայացուցիչ, իր մասնակցութիւնը բերած է Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան Պատգամաւորական ժողովներուն: Իր մտերիմ գործընկերները եղած են Յովհաննէս Շահինեանը, Հայկազ Մեսուճեանը, բժիշկ Պէրպէրեանը, Երջանիկ Կարպուշեանը, Պողոս Ղազարեանը եւ ուրիշներ:

Եղբ. Ալետիսին կը ցանկանք երկար եւ երջանիկ տարիներ, մաղթելով որ ան միշտ մնայ պատնէշի վրայ, յառաջացած տարիքին իսկ ծառայելով իր սիրելի միութեան եւ ժողովուրդին:





ՄԵՐՈՒՆԴՆԵՐ, ԴՈՒՔ ՁԵՉ ՃԱՆԱԶԷՔ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ...



28

Մալխին, Հայաստանի զանազան մարզերէն 180 սկաուտներ հաւաքուեցան Սարդարապատ: Իրենց կուռ շարքերով, ազգային երգերով ու պարերով, անոնք անգամ մը եւս փաստեցին, որ բազում նուիրեալներու արեան զնով կերտուած անկախ պետականութեան արժանի յաջորդներն են:

Ու պատահական չէ, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի խմբապետական խորհուրդը Սարդարապատի մէջ սկաուտներուն յանձնեց աստիճաններ եւ կարգեր: Հաստատագիրներու արժանացած պատանիներուն եւ երիտասարդներուն համար այդ օր կրկնակի տօն էր...:





ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՐԱՀ ԳԻՒՄՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՉ

Chirakcentre.org
ԳԻՒՄՐԻ



Շաբաթ, 7 Յունիս 2014-ին, Գիւմրիի պետական մանկավարժական համալսարանի սրահներէն մէկը կոչուեցաւ հայ մարմնակրթութեան եւ սկաուտական շարժման մէջ անդնահատելի վաստակ ունեցող Վահան Չերազի անունով:

Այս առիթով տեղի ունեցաւ Վահան Չերազի կիսանդրիի հանդիսաւոր բացում՝ համալսարանի համանուն սրահին մէջ: Բացման հանդիսութեան ներկաներու շարքին էին Չերազի հարազատները եւ Հ. Հանրապետութեան մարմնամարզի եւ երիտասարդութեան հարցերու նախարար Գաբրիէլ Ղազարեան:

Հանդիսութեան խօսքեր արտասանեցին Գիւմրիի համալսարանի դասախօսական կազմի անդամներ, Չերազի դուստրը՝ Բիւրակն Չերազ եւ թոռը՝ Ալեւտիք Իշխանեան: Անոնք անդրադարձան Վահան Չերազի Ալեքսանդրապոլի որբանոցներուն մէջ ծաւալած գործունէութեան, Չերազ մարդուն եւ հայուն բնորոշ յատկութիւններուն:

Վահան Չերազի կիսանդրին. գործ՝ քանդակագործ Արտուշ Պապոյեանի:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Արմաւիրի եւ էջմիածինի սկաուտները, իրենց ընթացիկ գործունէութեան կողքին, Կիրակի, 18 Ապրիլին, որոշեցին ունենալ յատուկ յայտագիր: Անոնք նախ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Արցախեան ազատամարտի նահատակ եղբ. Վարդան Բախշեանի յիշատակին, այցելեցին անոր անունը կրող դպրոցը եւ ներկաներուն փոխանցեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի շնորհաւորական խօսքերը:

Ապա, Արմաւիրի կենդանաբուսական այգի այցելութենէն ետք, սկաուտները ձեռնարկեցին հանրագուտ աշխատանքի: Բոլորը կատարեցին մաքրութեան արշաւ: Մաքրեցին տեղւոյն աղբերը եւ հաւաքեցին չորցած ճիւղերը:

Յայտագիրի գործադրութեան առիթով, Արմաւիրի եւ էջմիածինի սկաուտները ողջունեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ընդհանուր խմբապետ եղբ. Գէորգ Գասպարեանը եւ Երեւանի խմբապետ եղբ. Վիգէն Յովհաննէսեանը: Յաջորդեց սկաուտութեան վերաբերեալ հետաքրքրական դասախօսու-



ՄԵՆՔ ՄԿԱՈՒՏՆԵՐ ԵՆՔ...

թիւն մը, որմէ ետք տեղի ունեցաւ սկաուտական աստիճաններու եւ կարգերու տուչութիւն:

Ինչպէս իր եզրափակիչ խօսքին մէջ եղբ. Յովհաննէսեան յայտնեց, սկաուտներ այդ օր հաւատարիմ մնացին իրենց խոստումին եւ կեանքի կոչեցին սկաուտական դաւանանքի կէտերէն առնուազն հինգը, ինչ որ խօսուեւ վկայութիւնը եղաւ յայտագիրի յաջողութեան:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԻ ՍԵՄԻՆԱՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ



Թղթակից ԵՐԵՒԱՆ

12 -20 Ապրիլին, Վրաստանի Բակուրիան քաղաքին մէջ տեղի ունեցաւ միջազգային սեմինար մը, որուն մասնակցեցան 11 երկիրներէ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Սեմինարին նպատակն էր գիտելիքներ փոխանցել ընկերային խտրականութեան եւ անոր դէմ պայքարի ձեւերուն մասին:

Սեմինարին Հայաստանը ներկայացնելու պատիւը վստահեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անդամ եղբայրներ Վլատիմիր Բրուտեանին, Դաւիթ Փանոսեանին եւ քոյր Լուսինէ Գէորգեանին:

Անոնք շատ կարճ ժամանակի մէջ կարողացան սերտ յարաբերութիւններ հաստատել տարբեր ազգերու ներկայացուցիչներու հետ, անոնց ծանօթացնել իրենց կազմակերպութիւնը եւ, առհասարակ, աշխոյժ մասնակցութիւն բերել սեմինարի ամբողջ ընթացքին:

Մասնակիցները Երեւան վերադարձան ահագին գիտելիքներով, անհրաժեշտ փորձառութեամբ, հաճելի յուշերով եւ նոր ընկերներով հարստացած:



ԲՈՂՈՐՍ ՀԱՒԱՍԱՐ ԵՆՔ...

Թղթակից ԵՐԵՒԱՆ

24 Ապրիլէն 3 Մայիս 2014, Վրաստանի Բորժոմի քաղաքին մէջ տեղի ունեցաւ սեմինար՝ նուիրուած ֆիզիքական եւ մտային դժուարութիւններ ունեցող մարդոց ընկերութեան մէջ համարկման հարցերուն:

Սեմինարին մասնակից երկիրներու շարքին էին Հայաստանը, Ուքրանիան, Պոլկարիան, Մոլտաւիան, Լաթվիան, Ռումանիան եւ այլ երկիրներ: Հայաստանը կը ներկայացնէր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը: Սեմինարին նիւթը լաւապէս ուսումնասիրելու եւ համապատասխան լուծումներ որոնելու նպատակով ճշդուած էին համապատասխան վարժութիւններ եւ մասնագիտական քննարկումներ:

Յայտագրին մէջ լայն տեղ յատկացուած էր գիտելիքներու, իսկ առօրեան լեցուն էր ուշագրաւ խաղերով եւ այցելութիւններով:

Բոլոր մասնակիցները տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ էին եւ փորձառութեան փոխանակման իմաստով շատ հետաքրքրական էր իրարու աշխատանքներուն ծանօթացումը: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ներկայացուցիչներ Լիլիթ Չաքարեանը, Հայկանոյշ Յովհաննիսեանը, Նարեկ Ասատրեանը եւ Շուշան Ասատրեանը սեմինարին կարողացան լաւագոյնս ներկայացնել իրենց կազմակերպութիւնը՝ յատուկ հետաքրքրութիւն ստեղծելով սկաուտութեան նկատմամբ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՄՇՏԱՆՈՐՈՎ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԴՄԷՋԷՆ ԼԻԲԱՆԱՆ ԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՆՈՐՈՎ ԵՅ ԻՐ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒՄՆ ՈՒ ՀԱԲԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ՄԱՅԻՍ 28-Ի ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

1 Յունիսը ազգային համախմբումի օր մը հանդիսացաւ լիբանանահայութեան համար, համախմբում՝ Մայիսեան փառապանծ յաղթանակին

չուրջ, անկէ փոխանցուած հպարտութեամբ լիանալու, անկէ պատգամ ու կտակ քաղելու նպատակով, համախմբում՝ Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ, անոր իտէպիներուն մեր հաւատարմութեան ու խոր վերանորոգելու եւ անոր շարքերուն մէջ գործած ու գործող նուիրեալներուն երախտագիտութիւն յայտնելու համար:



1 Յունիսին լիբանանահայութիւնը անգամ մը եւս խիտ շարքերով եկաւ Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտ՝ Հ.Մ.Ը.Մ.ի աւանդական Մայիսեան փառատօնին մասնակից ըլլալու, նոր սերունդի ներկայացուցիչներու խրոխտ տողանցքին ականատեսը ըլլալու եւ անոնց ներշնչած յոյսով ու հաւատքով ներշնչուելու համար:

Մայիսեան փառատօնը վայելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին բարձր հովանաւորութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հովանաւորութիւնը: Փառատօնին նախագահութիւնը ստանձնեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանը, կազմակերպումը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը:



Ashnag©

ՋԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ

Փառատօնին սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ հնչած Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով բարձրացան Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշները, ապա խորհրդաւոր կերպով կատարուեցաւ Չահափառութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտական վեթերան սերունդի ներկայացուցիչին կողմէ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՄԻԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց քոյր Թայլին Օրտողլեան: Ան Հայաստանի Հանրապետութեան կերտման եւ 28 Մայիսի փառահեղ յաղթանակին անդրադառնալով ըսաւ, որ առանց անոնց հաւանաբար կարելի պիտի չըլլար ունենալ երազը եւ իրականացումը այսօրուան անկախութեան եւ պետականութեան:

Քոյր Օրտողլեան յայտնեց, որ 96 տարիներ առաջ հայ ժողովուրդի պատմութիւնը ունեցաւ երկու կարեւոր իրադարձութիւն՝ անկախ Հայաստանի հռչակում եւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան ծնունդ Պոլսոյ

մէջ: «Երկու իրադարձութիւններ, որոնք անկախադարձային կը նկատուին մեր պատմութեան մէջ: Այն պահուն, երբ Երեւանի մէջ Արամ Մանուկեանն ու անկախութիւնը կերտող հակառակութեան, Պոլսոյ մէջ Քրիսեան, Հինդեան, Յակոբեան, Չերազ եւ ուրիշներ Եղեռնի ցաւէն ու տառապանքէն կը հիմնէին մարմնակրթական միութիւն մը, որուն կու տային հայ ժողովուրդին ծառայելու պարտականութիւնը», հաստատեց ան:



Ashnag©



Շարունակելով, քոյրը նկատել տրեւաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան առաջին օրէն իսկ նպատակը յստակ էր՝ պատանիին եւ երիտասարդին ջամբել այնպիսի դաստիարակութիւն մը, որուն ճամբով ան ըլլայ մարմնով ու մտքով առողջ հայ մարդ, ծառայէ իր ժողովուրդին եւ հայրենիքին: Այսօր, միութեան աշխարհասփիւռ մասնաճիւղերն ու հազարաւոր սկառտները, մարզիկներն ու միութենականները կը շարունակեն գործել նոյն հաստատ կամքով եւ անխնջ ճիգերով՝ անխախտ պահելու այն բոլոր սկզբունքները, որոնց վրայ հիմնուած է այս կազմակերպութիւնը:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Շրջանային Վարչութեան ներկայացուցիչին խօսքէն ետք, Լիբանանի բոլոր մասնաճիւղերէն սկառտներ գունաւոր կտաւներով դաշտին վրայ գծեցին երկրին քարտէսը: Այս առիթով կատարուեցաւ իւրաքանչիւր մասնաճիւղի պատմականին ներկայացումը, որմէ ետք մասնաճիւղին գոյնը ներկայացընող յատուկ դրօշը գետեղուեցաւ քարտէսին համապատասխան բաժնին վրայ: Այսպէս



Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՍԸ

Փառատօնին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Կարպիս Գապասազալեան: Եղբայրը նախ ներկայացուց «Վերածնունդի ու յաղթանակի, ինքնորոշման ու վճռականութեան օրը»՝ 28 Մայիսը եւ յայտնեց, որ մեր ապագայատեսիլ հերոսները Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը կերտեցին, որովհետեւ ունէին ամրակուռ հաւատք



իրենց ազգային ըմբռնումներուն մէջ, տենդազին սէր՝ իրենց ժողովուրդին նկատմամբ եւ արտակարգ նուիրում, զոր փաստեցին իրենց կեանքով, երբ կեանք տուին հայոց պատմութեան նորագոյն հրաշքին՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի համազգային գաղափարին:

Եղբ. Գապասազալեան շեշտեց, որ այս առիթով կազմակերպուած տօնախմբութիւնները առիթ են լուսարձակի տակ առնելու Հ.Մ.Ը.Մ-ի վեհագոյն նպատակին գործադրութիւնը, որովհետեւ այս միութիւնը միշտ ալ գիտակցեցաւ, որ ամէն գնով պիտի ծնի ախոյեաններ, ազգին պիտի նուիրէ սկառտ պատասխանատուներ, վարչականներ եւ միութենականներ: «Վկայ՝ Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան բազմահազար էջերը: Վկայ՝ որբանոցէն ծնած այս հզօր միութիւնը, որ աշխարհի բոլոր ցամաքամասերուն մէջ կը գործէ իր 105 մասնաճիւղերով, Եռագոյն դրօշին ներքոյ՝ ամէնուրեք եւ ամէն ժամ ստեղծելով «նոր Հայաստան» մը», յայտնեց ան, աւելցնելով, որ միութեան երդիքին տակ հասակ կը նե-

տեն այնպիսի սերունդներ, որոնք կը սորվին իրենց անձէն առաջ եւ իրենց անձէն ետք իրենց նմանին ծառայելու նուիրական ոգին ու յանձնառութիւնը, ամբողջական հաւատարմութիւնը»:

Եղբ. Գապասազալեան դիտել տրեւաւ, որ հայ ժողովուրդին դիմաց միշտ եղած են մարտահրաւէրներ, սակայն ան կարողացած է շրջանցել գանոնք, նոյնիսկ կարողացած է յարուստիւն առնել Յեղասպանութենէն, տարագրութեան արհաւիրքէն, որովհետեւ օժտուած է վճռականութեամբ եւ գոյատեւելու հատկութիւնով: Ան հաստատեց, որ այսօր եւս պէտք է ձգտիլ «Նպատակասլաց կեանքի, յարատեւ պայքարի եւ մեր պահանջատիրութիւնը միշտ կենդանի պահելու նպատակակէտին»:

Իր պատգամին աւարտին, Կեդրոնական Վարչութեան եղբայրը կոչ ուղղեց բոլորին հաստատաբայ ընթանալու դէպի մեր պայծառ ապագայի հորիզոնները, առաջնորդուելու նահատակներէն ժառանգած կտակով եւ ուխտով, մինչեւ իրականացումը մեր մեծ երազին՝ Ազատ, Անկախ, Ամբողջական եւ Միացեալ Հայաստանին (Եղբոր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 7-8):

ԼԵՎԱՄ-Ի ԱՆՈՅԵԱՆՆԵՐՈՒ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԵՆՈՒԹԻՒՆԸ

Կեդրոնական Վարչութեան պատգամին յաջորդեց ԼԵՎԱՄ-ի ախոյեան վարժարաններու բաժակներու եւ վահաններու տուչութիւնը: Նախակրթա-



րանի բաժնի վահանին տիրացաւ Ազգ-Քառասնից Մանկանց վարժարանը, միջնակարգի՝ Ազգ. Սուրէն Խանամիրեան քոլէճը, իսկ երկրորդականի՝ Համագայինի Մեղանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանը, իսկ Հայկագեան համալսարանի «Յէր փլէյ»-ի մրցանակին արժանացաւ Ազգային Յառաջ-Գալուստ Կիւլպէնկեան վարժարանը:

ՏՈՂԱՆՅՔԸ

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին առաջնորդութեամբ խրոխտ, հպարտ եւ հաստատ քայլերով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ-ականները՝ մարզիկ թէ սկառտ, տողանցեցին ԼԵՄ-ականները, Հ.Յ.Դ. Պատանեկան Միութիւններու մարտարուեստի խումբերը եւ ԼԵՎԱՄ-ի մասնակցած լիբանանահայ վարժարաններու աշակերտները: Տողանցքին մասնակցեցան նաեւ նախապէս Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի Փոլիթպոլի խումբերուն մաս կազմած եւ այժմ Լիբանան հաստատուած տղաքը, որոնք փառատօնին նախօրեակին Փոլիթպոլի բարեկամական մրցում մը կատարեցին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Փոլիթպոլի ներկայացուցչական խումբին հետ:

ԱՌԱՋՆՈՐԴ ՇԱՀԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆԻՆ ՊԱՏԿԱՍԸ

Փառատօնին փակման խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան: Ան ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ականները, որոնք խրոխտ

քայլերով խիզախօրէն տողանցեցին Եռագոյնին ներքեւ՝ յոյս ներշնչելով ապագայի նկատմամբ: Ան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը հանդիսացաւ այն միութիւնը, որ մարդու զգացման իմաստով մեծ աշխատանք տարաւ ու կը շարունակէ տանիլ: Ապա, Առաջնորդը անդրադարձաւ Մայիս 28-ի խորհուրդին եւ կարեւորութեան հաստատելով, որ 96 տարի առաջ կերտուած յաղթանակը տարուեցաւ երկիւղալի պահու մը, ի գին հերոսներու արեան ու նուիրումին: Առաջնորդ Սրբազանը հաստատեց, որ վեհ նպատակին համար իրենց կեանքը զոհածները երբեք չեն մեռնիր, այլ անոնք կը դառնան պատգամ եւ կտակ, որպէսզի նոր սերունդները ապրին նոր յոյսով, նոր տեսիլքով եւ հայրենական բարձր գիտակցութեամբ:

Շահէ Եպս. Փանոսեան ըսաւ, որ հայահարձ Պուրճ Համուտի մէջ համախմբուած ենք պատիւ ընծայելու Մայիս 28-ը կերտած հերոսներուն, նաեւ՝ նուիրեալ աշխատանք տանող Հ.Մ.Ը.Մ-ին: Ան աւելցուց, որ հայրենիքն ու հայրենիքը այսօր կարիքը ունին այնպիսի հայրերի ներքեւ, որոնք ատակ են շարունակելու նախնիներու ուղին, իրենց անձին գնով ու ամենայն հաւատարմութեամբ ծառայելու իրենց ազգին, որպէսզի կարելի ըլլայ լուսաշող ապագայ մը կտակել յառաջիկայ սերունդներուն:

Առաջնորդ Սրբազանին պատգամէն ետք, փառատօնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ ՏԱՐԵՇՐԶԱՆԸ

Բանի մը տարիներու զգալի տեղադրւել ետք, մարզական 2013-2014 տարեշրջանը Հ.Մ.Ը.Մ.Ի Լիքանանի ընտանիքին համար եղաւ բաւական արդիւնաբեր: Հ.Մ.Ը.Մ.Ի տղաքն ու աղջիկները տարբեր մարզաձեւերու մէջ Ֆութպոլ, պասքեթպոլ, աթլետիք, հեծեյարչաւ, ճատրակ եւ փինկ-փոնկ արձանագրեցին պատուաբեր յաջողութիւններ, մետալներ ու բաժակներ ապահովելով իրենց, ազգային հպարտութիւն եւ ուրախութիւն համակիրներուն:

ըր 8 յաղթանակով, 1 հաւասարութեամբ եւ 1 պարտութեամբ: 10 մրցումներու ընթացքին խումբը նշանակեց 24 կոլ եւ ստացաւ 9 կոլ:

Իր խմբակին պարագլուխի դիրքը զբաղեցէ ետք, Հ.Մ.Ը.Մ. ստիպուեցաւ խաղալ փլէյ-օֆի մրցումներ Գ. դասակարգի մնացեալ երեք խմբակներուն առաջին դիրքերը զբաւած խումբերուն իսլահ Պրոֆ Շիմալիի, Շապապ Հուսէյն Թահթալի եւ Շարքի դէմ: Մրցումներէն երկուքը ան աւարտեց յաղթանակով, մէկը՝ պարտութեամբ (նշանակեց 6 կոլ, ստացաւ 6 կոլ), հետեւաբար իսլահ Պրոֆ Շիմալիի հետ ան իրաւունքը ստացաւ բարձրանալու Բ. դասակարգ: Շապապ Հուսէյն Թահթալի եւ Շարք մնացին Գ. դասակարգ:

տարեշրջանի աւարտել պատուաբեր վեցերորդ դիրքի վրայ:

... ԻՍԿ ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՑ ԵՐԿՐՈՐԴ...

ՅՈՒԹՊՈՒԼԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՑ Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

Յաջողութիւններու ազդանշանը տուաւ Ֆութպոլի ներկայացուցչական խումբը, որ հինգ տարի Գ. դասակարգ մնալէ ետք, Շաբաթ, 19 Ապրիլին, յաջողեցաւ բարձրանալ Բ. դասակարգ: 4 արժէ նշել, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆութպոլի խումբը 2004-ին հրաժեշտ տուած էր Ա. դասակարգին, իսկ 2009-ին Բ. դասակարգին:

Գ. դասակարգէն Բ. դասակարգ բարձրացումը դիւրին չեղաւ: Խումբը նախ երթ ու դարձի դրութեամբ ճակատեցաւ Գ. դասակարգի Բ. խմբակին մաս կազմող հինգ խումբերուն դէմ (ՀՄՄ, Հարոֆ Ըրտէ Խէյրի, Շեքքա, Շապապ Արապի, Ամալ Թրիփոլի) եւ 25 կէտով զբաւեց խմբակին առաջին դիրքը:

ՊԱՍԿԵԹՊՈՒԼԻ ՏՂՈՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ԳՐԱԻԷ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԻՐՔԸ

Անցնող տարեշրջանին Ա. դասակարգ բարձրացած Հ.Մ.Ը.Մ. Ի պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբը բոլորեց յիշատակելի տարեշրջան մը: Թէեւ երթին սերպ մարզիչ Նենաթ Քրոզիչի հետ խումբը յուսախար քրաւ համակիրները 7 պարտութեամբ եւ միայն 2 յաղթանակով, սակայն դարձին պոստիպի մարզիչ Ալէն Ապազի հետ ան արձանագրեց 8 յաղթանակ, 1 պարտութիւն եւ հասաւ յաւազոյն ութեակի մրցումներու հանգրուան:

Ութեակի մրցումներուն Հ.Մ.Ը.Մ. Ի տղաքը ունեցան հետաքրքրական եւ սուր ճակատումներ, եւ ի վերջոյ յաջողեցան

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.Ի աղջկանց պասքեթպոլի խումբը ունեցաւ սպաւորիչ ելուցներ եւ յաւազոյն քառեակի մրցումներէն ետք հասաւ մինչեւ աւարտական հանգրուան, ուր տեղի տուաւ Ռիատի Պէյրուսի հօր կազմին դէմ: Աւարտականի երեք մրցումները եղան ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.Ի մրցակիցին՝ 63-41, 43-36 եւ 72-63 արդիւնքով:

ըով պարտութեան մատնեց Լիքանանի ախոյեանը եւ երկար տարիներու սպասումէ ետք՝ պատիւը ունեցաւ բարձրացնելու Լիքանանի բաժակը:

ԵՒ ԿԸ ՏԻՐԱՆԱՑ ԼԻՔԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻՆ

Լիքանանի բաժակի մրցումներուն, աղջկանց պասքեթպոլի խումբը եղաւ անխալական եւ մինչեւ աւարտական հասնելով «վրէժը լուծեց» Ռիատիի աղջկանց խումբէն, երբ 52-39 արդիւնքով:





**ԱԹԼԵԹԻԶՄԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ
ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ**

Աթլետիզմի Լիբանանի տարիքային ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ-ի նորակազմ խումբը արձանագրեց խրախուսական արդիւնքներ: Ժամհուրի մէջ տեղի ունեցած մրցումներուն լուսարձակները իրենց վրայ ամէնէն աւելի հրաւիրեցին հետեւեալ եղբայրներն ու քոյրերը.-

Սերժ Տիչչէքէնեան- բարձրութիւն ցատկելու երկրորդ (1995-1996-ի ծնունդներ):

Սելին Յակոբեան- գունտ նետելու երրորդ (1999-2000-ի ծնունդներ):

Կրէկ Ֆրընկիչեան- գունտ նետելու երրորդ (1997-1998-ի ծնունդներ):

Դրօ Գասապեան- մէկ քայլ ոստումի երրորդ (1995-1996-ի ծնունդներ):

Անդրանիկ Ղազարեան- մէկ քայլ ոստումի չորրորդ (1995-1996-ի ծնունդներ):

Արին Թաշճեան- բարձրութիւն ցատկելու չորրորդ (1999-2000-ի ծնունդներ):

Քլոէ Պոլ Թանոս- 250 մետր վազքի չորրորդ (2003-2004-ի ծնունդներ):

Մարինա Պոլ Թանոս- մէկ քայլ ոստումի չորրորդ (2001-2002-ի ծնունդներ):

Ճորճ Մկրտիչեան- գունտ նետելու հինգերորդ (1999-2000-ի ծնունդներ):

Կրէյա Մարտիրոսեան- 80 մետր վազքի հինգերորդ (1999-2000-ի ծնունդներ):



**ՀԵԾԵԼԱՐՇԱԻԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ
ՄՐՑԱՇԱՐՔԻՆ ԵՈՒՍԷՑ
ՆԱՏԷՐ ԵՐԿՐՈՐԴ**

Մայիսին տեղի ունեցաւ հեծելարչաւի Լիբանանի բաժակի մրցաշարը՝ մասնակցութեամբ տարբեր ակումբներէ 29 հեծելանւորներու: Մրցաշարը, որ 82.5 քմ. երկարութիւն ունեցաւ, կրեց Լիբանանի հեծելարչաւի Ֆետերասիոնի նախկին նախագահին (1971-1998)՝ Թանիոս Միրի անունը:

Մրցաշարքին ազդանշանը տրուեցաւ Թապարթայէն: Մասնակիցները ուղղուեցան Շեքքա, ապա Նահր Իպրահիմ վերադառնալով եւ դէպի Տըթրի Պիր Հիթ գիւղը բարձ-

րանալով հասան ժամանման գիծ:

Մեծերու մրցումին, Հ.Մ.Ը.Մ. Պէյրութէն Եուսէֆ Նատէր հանդիսացաւ երկրորդ (2 26՝ 55"): Յատկանշական արդիւնքներ արձանագրեցին նաեւ անոր խմբակիցները՝ Սալահ Ռապպահ (չորրորդ՝ 2 29՝ 20") եւ Հայկ Մելիքեան (ութերորդ՝ 2 32՝ 17"):

**ՃԱՏՐԱԿԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱԽՈՅԱՆՈՒԹԵԱՆ
16 ԿՐՏՍԵՐՆԵՐ ԿԸ ԽԼԵՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ**

Ճատրակը եղաւ Հ.Մ.Ը.Մ-ական յաջողութիւններու այլ մարզածեւ մը: Լիբանանի ճատրակի տարիքային ախոյեանութեան մրցումներուն հինգ Հ.Մ.Ը.Մ-ականներ խլեցին առաջնութիւններ, մինչ 11 ուրիշներ գրաւեցին պատուաբեր երկրորդ եւ երրորդ դիրքերը:

Առաջնութիւններու տիրացան Ալիք Թէմպելեան (8 տարեկանէն վար աղջիկներ), Նանօր Առնելեան (10 տարեկանէն վար աղջիկներ), Նարօտ Գլըպոզեան (12 տարեկանէն վար աղջիկներ), Փասքալ Պետրոսեան (14 տարեկանէն վար տղաք) եւ Յուշիկ Գայմագամեան (18 տարեկանէն վար աղջիկներ):

Երկրորդ հանդիսացան Անժելինա Դարբինեան (8 տարեկանէն վար աղջիկներ), Հրակ Լախեան (10 տարեկանէն վար տղաք), Սթեֆանի Կիրակոսեան (10 տարեկանէն վար աղջիկներ), Ճիօ Գալուստ (12 տարեկանէն վար տղաք), Ալիս Գարաճեան (12 տարեկանէն վար աղջիկներ), Գարլօ Դարբինեան (14 տարե-

կան էն վար տղաք) եւ Նանի Գալուստեան (14 տարեկան էն վար աղջիկներ):

Երրորդ դիրքի տիրացան Լիակ Մարտիրոսեան (10 տարեկան էն վար աղջիկներ), Լեւոն Գալաջեան (12 տարեկան էն վար տղաք), Հրակ Գլուպոգեան (16 տարեկան էն վար տղաք) եւ Արամ Աբրահամեան (18 տարեկան էն վար տղաք):



Հ.Մ.Ը.Մ-Ի ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԱՂՋԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ

ԱԽՈՑԵԱՆՈՒԹԵԱՆ...

Շաբաթ, 31 Մայիսին աւարտեցաւ Լիբանանի փինկ-փոնկի աղջկանց Ա. դասակարգի խմբային ախոյեանութիւնը, որուն աւարտականը իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի աղջկանց խումբն ու Նատուա Քամաթիէն: Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի, մարզիչ եղբ. Բաֆֆի Մունջօղլեանի հսկողութեամբ, տիտղոսին տիրացաւ 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք մրցակիցը:

Աւարտական մրցումները ընթացան հետեւեալ ձեւով: Նոէլ Քէշիշեան (Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի) յաղթեց Մարիանա Սահակեանի (3-2), Մալաք Խուրի՝ Դուին Մունջօղլեանի 3-1 (Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի), Լարա Քէչէպաշեան (Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի)՝ Թիոտորո Քալաշի (3-0), Մարիանա Սահակեան՝ Դուին Մունջօղլեանի (3-2): Հինգերորդ եւ ճակատագրական վերջին մրցումին, Նոէլ Քէշիշեան 3-0 արդիւնքով յաղթելէ ետք Մալաք Խուրիի, Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսիին ապահովեց ախոյեանութեան տիտղոսը:

Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի տղաքը, իրենց կարգին, գրաւեցին Լիբանանի տղոց խմբային ախոյեանութեան երրորդ դիրքը: Առաջնութեան տիրացաւ Ռիատի Պէյրուսի, իսկ երկրորդ հանդիսացաւ Ժընուպ Թուլի:

... ԻՍԿ ԼԱՐԱ ՔԷՉԷՊԱՇԵԱՆ Կ՝ԱՐԺԱՆԱՆԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ

Խմբային ախոյեանութենէն շաբաթ մը առաջ, տեղի ունեցաւ փինկ-փոնկի Լիբանանի բաժակի մրցաշարքը, որուն աւարտականը եղաւ գոլտ Հ.Մ.Ը.Մ. ալան, որովհետեւ իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի մարզիկուհիներ Լարա Քէչէպաշեանն ու Նոէլ Քէշիշեանը: Քէչէպաշեան 3-1 արդիւնքով յաղթեց իր խմբակիցին: Երրորդ դիրքը գրաւեց Ռիթա Պըսէյպէս («Անդրանիկ» Պէյրուսի), իսկ չորրորդ հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսիէն քոյր Դուին Մունջօղլեան: Հ.Մ.Ը.Մ-ի տղաքը չյաջողեցան յատկանշական յաջողութիւններ արձանագրել:

ՎԻԳԷՆ ԶԱՔԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԵԾԵԼԱՐՇԱԻՒ ՄՐՑՈՒՄ

Հովանաւորութեամբ Լիբանանի հեծելարշաւի Փետերասիոնին եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Կիրակի, 11 Մայիսին, Տըպպալէի «Լա Մարինա» շրջանին մէջ տեղի ունեցաւ Արցախեան ազատամարտի նահատակ, Հ.Մ.Ը.Մ. ալան հեծելանորդ եղբ. Վիգէն Զաքարեանի յիշատակին հեծելարշաւի մրցում մը՝ ներկայութեամբ Վիգէն Զաքարեանի մօր եւ քրոջ, հեծելարշաւի Փետերասիոնի անդամներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներուն, հեծելարշաւի յանձնախումբին եւ մեծ թիւով մասնակիցներու:

Մրցումին սկիզբը, ներկաները ողջունեց Լիբանանի հեծելարշաւի Փետերասիոնի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Նազօ Հապիպեան: Ան նշեց, որ մրցումը նուիրուած է նահատակ Հ.Մ.Ը.Մ. ալան հեծելանորդ եղբ. Վիգէն Զաքարեանի յիշատակին: Մրցումին մեկնարկը տուաւ Փետերասիոնի նախագահ եղբ. Վաչէ Մատուրեան: Մասնակիցները, 63 հեծելանորդներ, բաժնուեցան երկու խմբակի: Պատանիներու եւ վեթերաններու մրցումը ունեցաւ 60 քլմ. երկարութիւն, իսկ արհեստավարժ հեծելանորդներու մրցումը՝ 90 քլմ. երկարութիւն:

Մրցումին աւարտին տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն: Դափնեկիրներուն բաժակները յանձնեցին Վիգէն Զաքարեանի մայրը, քոյրը եւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Խաչատուրեան:

Հարկ է նշել, որ պատանիներու մրցումին առաջին երկու դիրքերը գրաւեցին Հ.Մ.Ը.Մ. ալան եղբայրներ Բեկոր Եագուպեան եւ Յակոբ Մաթոյեան:



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՂԱՆՑՔ ՄԻՏՆԻՒՄԷՁ

ՄԱՅԻՍԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Յովհաննես Մարտոյեան ՄԻՏՆԻ

1966 թվականին սկսեալ, ամէն տարի, անընդհատ, Հ.Մ.Ը.Մ-ի Միտնի սկսուողական բոլոր բաժամունքները՝ արի-արենոյշ, գայլիկ-արծուիկ, կակուղ թաթիկ-մրջնիկ կը կազմակերպեն ուխտագնացութիւն դէպի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յարութիւն եկեղեցի, ներկայ կ'ըլլան Պատարագին եւ կը ստանան Սուրբ հաղորդութիւն:

Այս տարի, սկսուողներ դարձեալ յարգեցին տարիներու իրենց սովորութիւնը եւ 25 Մայիս 2014-ին, շուրջ 140 հոգի, վերանորոգեցին իրենց ուխտը՝ հաւատարմութիւն Աստուծոյ ու հայր Սուրբ հաւատքին, ծառայութիւն Ազգին եւ Հայրենիքին, միշտ օգնել ուրիշին...:

Այս առթիւ իր արտասանած քարոզին մէջ, թեմի Առաջնորդ Սրբազանը ոգեկոչեց Հայաստանի Ա. Հանրապետութեան 96-ամեակը եւ բարձր գնահատեց

տեղ Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքները, յատկապէս՝ նորահաս սերունդներու հոգիին մէջ վառ պահելու ազատութեան ու անկախութեան արժէքները: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Մայիսեան յաղթական ճակատամարտերուն զոհուած հերոսներու յիշատակին, նաեւ՝ մեզմէ



յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նորոգ հանգուցեալ անդամ եղբ. Միհրան Շիմշիբեանի մահուան քառասունըօր առիթով:

Յաւարտ եկեղեցական արարողութեան, եկեղեցին դուրս, Սրբազան հօր օրհնութեամբ սկսաւ ընդհանուր տողանցքը: Դրօշակակիրներ բարձր բռնած Աւստրալիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշակները, թմբկահարներու ազգային եղանակներու կըռոյթով խումբերը առաջնորդեցին Հայ Մշակութային Կեդրոն, ուր գործադրուեցաւ կոկիկ յայտագիր:

Բացման խօսքը արտասանեց խմբապետուհի բոյ Մարալ Վարժապետեան: Ան բարի գալուստ մաղթեց Հ.Յ.Դ. «Դրօ» Առանձնակի կոմիտէին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներուն:

Շրջանային Վարչութեան պատգամը արտասանեց եղբ. Բաֆֆի Պօշնագեան: Եղբայրը ողջունելէ ետք հրաւիրեց

եախերն ու ներկաները, խրախուսեց բոլորը անկախութեան ջահը միշտ վառ պահելու եւ կարելի բոլոր միջոցներով սատարելու հայ ժողովուրդի ու հայրենիքի հզօրացման:

Շարունակելով, եղբ. Պօշնագեան գնահատեց զոհաբերութեան ոգին ծրնողներուն, որոնք իրենց գաւազները կը մղեն Հ.Մ.Ը.Մ-ի սկսուողական շարքեր, ուր Հ.Մ.Ը.Մ-ի միջոցով անոնք մասնակից կը դառնան հայապահպանման աշխատանքին: Եղբայր Պօշնագեան շնորհակալութիւն յայտնեց խմբապետական կազմին այս գեղեցիկ եւ հոգեշահ ձեռնարկի պատրաստութեան համար:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ողջոյնի եւ գնահատանքի խօսքը փոխանցեց Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան:

Ապա, խանդավառ մթնոլորտի մէջ խումբերը ելոյթ ունեցան սկսուողական երգերով, կանչերով, բուրգով եւ նուագով:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Հանդիսութիւնը վերջ գտաւ «Ով հայ արի» սկսուողական քայլերգի երգեցողութեամբ:

«ՄԻՋՐԱՆ ԾԻՄՇԻԲԵԱՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՖՈՆՏ»-ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
●Տեղ եւ տիկին Բաֆֆի Հատիտեան 20 ԳԱՆ. տոլլար





Հ.Մ.Ը.Մ. Ի ՖՈՒԹԲՈՂԻ ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ ՄՏԵՐՄԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՁ

Սալբի Թեքլեյեան ԲԱԼԻՖՈՐՆԻԱ

1 960-1970-ական թուականներուն, երբ լիբանանահայ գաղութը իր ոսկեայ տարիները կ'ապրէր, հայկական մարզական աշխարհը եւս փայլուն նուաճումներ կ'արձանագրէր: Հ.Մ.Ը.Մ. Լիբանանի ֆուտպոլի ախոյեանութեան բաժաններ նուաճելով, ուրախութեան արցունքներ կը խլէր բազմահազար համակիրներէ, հպարտութեամբ լեցրնելով յաղթանակներու կարօտ անոնց կուրծքերը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմէն ետք, սակայն, յաղթանակներ նուաճած ֆուտպոլիստները հպարտութեան եւ գնահատանքի արժանի յիշատակելի դրուագները Հ.Մ.Ը.Մ. ֆուտպոլի պատմութեան էջերուն մէջ ձգելով, դժբախտաբար, աշխարհով մէկ ցրուեցան եւ անոնց կարեւոր մէկ մասը հաստատուեցաւ Հարաւային Քալիֆորնիա:

Մնալով սակայն հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.ի հոգեկան եւ ֆիզիքական արժանիքներուն, վերջին քանի մը տարիներուն, Հարաւային Քալիֆորնիա գաղթածներէն ոմանք, հակառակ իրենց յառաջացած տարիքին, Ազգային Ֆերասեան վարժարանի Նորթ Հիլզ համալիրի ֆուտպոլի դաշտին վրայ ամէն կիրակի փորձեր կը կատարեն: Փառաւոր յաղթանակներ արձանագրած այս խումբը յաճախ մտերմիկ եւ ընկերական հանդիպումներ ունենալու գեղեցիկ սովորութիւնն ալ ունի: Այդ հանդիպումներէն վերջինը տեղի ունեցաւ 17 Ապրիլ 2014-ին, Հոլիվուտի «Գաւառ» ճաշարանին մէջ, ներկայութեամբ ջերմ զգացումներով բարախող շուրջ 40-50 Հ.Մ.Ը.Մ. ականներու եւ համակիրներու, որոնք անգամ մը եւս հաւաքուած էին ու-

րախ մթնոլորտի մէջ անցեալի իրենց յիշատակները վերապրելու: Հաւաքոյթին ներկայ էին վեթերաններու խումբի ատենապետ եղբ. Խաչիկ Ճիկէրճեան, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի անցեալի աստղերէն եւ այժմ վեթերաններու խումբի պատասխանատու եղբ. Սազո Նէնէճեան, անդամներ՝ եղբայրներ Վարուժ Փաթրիկեան, Սարգիս Սազայեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Գօգօ Պալեան, եղբ. տոբթ. Արմէն Կէօնճեան, եղբ. Հրայր Տէր Թորոսեան եւ «Գաւառ» ճաշարանի սեփականատէր եղբ. Յարութ Մատէնեան:

Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեան համար անհրաժեշտ է սիրտերը լայն բանալ: Այդ պատճառով ալ, վեթերաններու խումբը միշտ գնահատած է իր բոլոր համակիրները, որոնք տարիներու ընթացքին նուիրաբերած են անխտիր: Համաձայն այդ սովորութեան, Վարդիվառ Մելքոնեան, Տիգրան Կիւլէսէրեան, Մեսրոպ Մարրիեան, Գօգօ Սարգիսեան եւ Բաֆֆի Իշխանեան գնահատանքի յուշատախտակներու արժանացան՝ իրենց ցուցաբերած հետաքրքրութեան, գուրգուրանքին, քաջալերանքին եւ նիւթական նուիրաբերումներուն համար: Անոնք մեծապէս սատար կանգնած են Հ.Մ.Ը.Մ.ին եւ, ինչու չէ նաեւ, գաղութի զանազան դժուարութիւններուն լուծման:



Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը բարձր պահող եւ «Բարձրացիր-բարձրացուր» կարգախօսին հաւատարիմ վեթերաններու խումբը իր բոլոր անդամներով կը մնայ այն կամաւոր բանակը, որ գիտակից ու պատրաստակամ է իր կարելիութիւններուն չափով դրական մասնակցութիւն բերելու հայ ժողովուրդի վերելքին եւ յառաջընթացին:

Ան միշտ պատրաստ եւ միշտ ներկայ է ծառայելու:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՐԵՉՆՈՅԻ «ՍԱՍՈՒՆ» ՄԱՄՆԱՃԻՂԷ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Սարգիս Փանոսեան ՖՐԵՉՆՈ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆրեչնոյի «Սասուն» մասնաճիւղի խմբապետական կազմին, Կիրակի, Մայիս 4-ին, յետմիջօրէի ժամը 3-ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ սկաուտական շքանշաններու («Ուուտ Պէճ») եւ աստիճաններու տուչութեան հանդիսութիւն՝ ներկայութեամբ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի խմբապետուհի քոյր Թային Հինտոյեանի, Ամերիկայի «Պոյ Սկաուտ»ի ներկայացուցիչներու, մեծ թիւով ծնողներու եւ բարեկամներու:

Եղբ. Նշան Տէր Գալուստեանի անգլերէն լեզուով բարի գալուստի խօսքէն ետք, բոլուն ծափահարութիւններով սկսաւ սկաուտական աստիճաններու տուչութիւնը: Քոյր Լիսա Փանոսեան ստացաւ մասնաճիւղի խմբապետուհիի աստիճան, քոյր Կարինէ Գնտոյեանի միաւորի պետի պաշտօնը վերանորոգուեցաւ, քոյր Սօսէ Գնտոյեան ստացաւ խմբապետուհիի աստիճան, իսկ եղբ. Րաֆֆի Հաւաթեան՝ փոխ խմբապետի աստիճան: Աստիճաններ տրուեցան նաեւ բոլոր քոյրերուն եւ եղբայրներուն՝ իրենց կատարած աշխատանքին համաձայն:

Ծափերու տարափին մէջ, կրկին բեմ բարձրացան քոյրեր Լիսա Փանոսեանն ու Կարինէ Գնտոյեանը, որոնք Ամերիկայի «Պոյ Սկաուտ»ի ներկայացուցիչներուն ձեռամբ ստացան «Ուուտ Պէճ» շքանշանը:

Ապա, քոյր Թային Հինտոյեան իր շնորհաւորութիւնը յայտնելէ ետք՝ բարձր գնահատեց «Սասուն» մասնաճիւղի խմբապետական կազմին աշխատանքները, մաղթելով աւելի բեղուն գործունէութիւն յառաջիկայ տարիներուն: Ան շնորհակալութեան խօսք յայտնեց նաեւ ծնողներուն, որոնք իրենց գաւազները վստահած են Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին:

Աստիճանաւորները, ամերիկացի հիւրերուն հետ ձեռք-ձեռքի տուած, երգեցին եւ իրենց կանչերով ներկաները խանդավառեցին: Անոնց միացան նաեւ սկաուտ քոյրերն ու եղբայրները՝ աններդաշնակ ելոյթի մը տպաւորութիւնը ձգելով, սակայն, անոնց թաթիկներէն եւ մանկական շրթներէն բարձրացող ծափերն ու կանչերը վստահ քաղցր եւ ներդաշնակ կը հնչէին իւրաքանչիւր մօր ականջին:

Այս խանդավառ միջնորդութեամբ շարունակուեցաւ նաեւ սուրճի եւ անուշեղէնի հիւրասիրութիւն, երբ ներկաները առիթը ունեցան մտերմիկ զրոյց մը ունենալու պատասխանատուներուն հետ: Փոքրիկ քոյրերն ու եղբայրները, ժպտե-





րես եւ մեծ ուրախութեամբ զիրար կը շնորհաւորէին իրենց ստացած աստիճաններուն համար, իսկ ծնողներ եւ բարեկամներ, շնորհաւորելէ ետք խմբապետական կազմի քոյրերն ու եղբայրները՝ ուրախ տրամադրութեամբ եւ ապագայի լաւագոյն հեռանկարներով հեռացան սրահէն:

Այդ կիրակի օրը, Հ.Մ.Ը.Մ.ի եղբայրական ոգին կը տիրէր Հայ Կեդրոնի սրահին մէջ: Վստահ, իւրաքանչիւր անհատ ապրեցաւ եւ զգաց այս մեծ կազմակերպութեան ազգօգուտ գործունէութեան արգասիքը եւ, վստահաբար, իր զաւակը պիտի առաջնորդէ դէպի ակումբ, որովհետեւ մեր փրկութեան միակ «տապանը»՝ մեր ակումբներն ու միութիւններն են:

ՄԱՅԻՍԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ. ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՍ



Ուրբաթ, 30 Մայիսի երեկոյեան, պատմական էջ մը արձանագրեց Հ.Մ.Ը.Մ. Երուսաղէմի յարկը, երբ Հայաստանի անկախութեան տօնին աւելի քան 120 երկրպագուներ, միասնաբար, Հ.Մ.Ը.Մ.ի սրահին մէջ դիմաւորեցին մեծ տօնը, որ հակառակ ժամանակագրական հեռաւորութեան, միշտ կը մնայ այժմէական իր գաղափարախօսական ակունքներով, պատգամներով, ազգային շունչով ու մանաւանդ՝ սերունդները ազգային ոգիով կլանելու իւրաքանակութեամբ:

Հանդիսութեան սկիզբը, քոյր Տաթևի Չանքերով իրականութիւն դարձած ՀՕՄ-ի նորաստեղծ պարախումբը բեմ բարձրացաւ ու հանդէս եկաւ երկու պարով ու մէկ մենապարով, աւելի քան տասնամեակ մը հայկական պար չտեսած բեմին ու հանդիսականներուն հայկական թարմ շունչները շնչելով:

Պարէն անմիջապէս ետք բեմ բարձրացաւ մասնաճիւղի երէց եղբայր եւ տարիներու ատենապետ եղբ. Յակոբ Տէմիրճեան, որ փոխանցեց օրուան պատգամը՝ շեշտը դնելով յատկապէս Մայիսեան յղթանակներու պատմականին եւ այդ մեծ իրադարձութեան ունեցած ազդեցութեան՝ սերունդներու ազգային դաստիարակութեան վրայ, ի հեճուկս եօթանասունամեայ համայնավար իշխանութեանց եւ սփիւռքեան դժուարին պայմաններուն:

Եղբօր խօսքէն եւ «Մեր հայրենիք»ի յոտնկայս երգեցողութենէն ետք, բեմը ստանձնեց գաղութի ծանօթ երգիչ Վինոն, որ յաջողեցաւ տասը վայրկեանի ընթացքին գրեթէ ամբողջ սրահը ոտքի հանել: Վինոյի տիրականօրէն հայերէն երգացանկը միշտ եռուզեռի մէջ պահեց պարի տրամադրեալ գո-

տին ու միայն օրուան հանդիսավար Յարութ Պաղամեանի ընդմիջումները արգիլեցին հեզասահ ընթացքը պահէն «գինովցած» երգ ու պարին:

Սրտաբուխ նուիրատուութիւններէն եւ վիճակահանութեան արդիւնքներէն բաւարարուած հանդիսավարը վերջապէս ու վերջնականապէս բեմը յանձնեց երիտասարդներուն, որոնք Վինոյի ներկայացուցած յեղափոխական մէկ երգին արձագանգեցին տասով ու ամբողջ ժամ մը նուագով թէ նուագէն անկախ բեմը զղրդաց Սարգարապատեան խենթերու ոտքերուն տակ: Ամբողջ ժամ մը բարձրաձայն հնչեց «Արիւնոտ դրօշ»ը, «Մենք անկեղծ գինուոր»ը, Դրօն, Սերօբը, Բարգէն Սիւնին, բոլորը, բոլորը, վերջապէս՝ «Երբ չի մնում»ը, որ եկաւ անգամ մը եւս բոլորին համոզելու, որ ի տես այս հիանալի երիտասարդութեան մենք վախնալիք բան չունինք, որովհետեւ ուրախութենէն թէ Մայիսեան ոգիէն գինով այս տղաքը տեղին պատրաստ են ու ատակ են լեռներ շարժելու:

Այս հոգեւորոգ տրամադրութեամբ բաժնուեցանք:



ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԵՐ

Անցնող ամիսներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի շրջանի չորս մասնաճիւղերը կատարեցին անդամական իրենց ընդհանուր ժողովները եւ ընտրեցին 2014-2015 տարեշրջանի վարչական նոր կազմերը:

Ստորեւ՝ նորընտիր կազմերը:

«Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔ» ՄՈՆԹՐԻԱԼ

- Եղբ. Բաֆֆի Աբանեան- Ատենապետ
- Քոյր Սառա Եղիայեան- Ատենադպիր
- Եղբ. Գոգո Օհաննէսեան- Գանձապահ
- Եղբ. Ճորճ Պալիոզեան- Գոյքապահ
- Եղբ. Վահէ Թաշճեան- Մարզական
- Քոյր Քրիստին Սահակեան- Հաշուապահ
- Քոյր Արբի Գազարեան- Խորհրդական

Հ.Մ.Ը.Մ. ԹՈՐՈՆԹՕ

- Եղբ. Տէնի Մարկորեան- Ատենապետ
- Քոյր Յովինէ Քէչիչեան- Ատենադպիր
- Եղբ. Շահէ Ծառուկեան- Գանձապահ
- Եղբ. Յակոբ Սարգիսեան- Մարզական

Քոյր Քաթիա Տէր Յովակիմեան- Սկստուական
Եղբ. Արթո Սաչերեան- Հաշուապահ
Եղբ. Արմէն Գրիգորեան- Խորհրդական

Հ.Մ.Ը.Մ. ԳԷՄՊՐԻՃ

- Քոյր Լիոնի Սարմազեան- Ատենապետուհի
- Քոյր Յուլիա Մկրտիչեան- Ատենադպիրուհի
- Քոյր Գարօլին Կիւլիամի- Գանձապահ
- Եղբ. Մհեր Պետրեան- Հաշուապահ
- Եղբ. Յովիկ Վեսոյեան- Գոյքապահ
- Եղբ. Նուպար Սաղտրճեան- Մարզական
- Եղբ. Շանթ Սարմազեան- Մարզական

Հ.Մ.Ը.Մ. ԼԱԻԱԼ

- Եղբ. Ֆրանսուա Գարայեան- Ատենապետ
- Եղբ. Վարուժան Տատաղյեան- Ատենադպիր
- Քոյր Մարի Աբիկեան- Գանձապահ
- Եղբ. Արմէն Ժէպէքեան- Հաշուապահ
- Եղբ. Սարգիս Գալուքճեան, եղբ. Համբիկ Լախոյեան, քոյր Սօսի Հայրապետեան- Խորհրդականներ



PinkKimberley.com.au

Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՔԻՆԻՈՅ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՄԻԱՒՈՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Թղթակից ԱԹՆՔ

Շաբաթ, 17 Մայիս 2014-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Գոքինիոյ սկաուտական միաւորը տօնեց իր հիմնադրութեան 90-ամեակը, հովանաւորութեամբ մասնաճիւղի վարչութեան, կազմակերպութեամբ

մասնաճիւղի խմբապետական կազմին եւ Սկաուտական Խորհուրդին:


Տօնակատարութիւնը կատարուեցաւ «Ձաւարեան» կեդրոնին մէջ, որ բաղկէ մինչեւ տանիք ողողուած էր սկաուտական ոգիով, ձեռագիր աշխատանքներով, լուսանկարներու եւ գոյքերու հարուստ արխիւով:

Օրուան յայտագիրը սկսաւ զոյգ քայլերգներով եւ դրօշակակիրներու

մուտքով: Նախագահեց քոյր Հայկան Չաքմաքճեան: Օրուան պատգամը փոխանցեց մասնաճիւղի խմբապետ եղբ. Գրիգոր Չաքմաքճեան: Յաջորդեց յոբելեար միաւորի 90-ամեայ պատմակա-

ՆԵՐԿԱՆԵՐԸ

Իրենց ներկայութեամբ տօնակատարութիւնը պատուեցին Յովհաննէս Արղ. Սաղտըճեան, փոխ նահանգապետ Լեոնիտաս Աթանասիատիս, Նիքեայի-Այ Իոաննի Ռենտիի քաղաքապետ Եորղոս Իոաքիմիտիս, փոխ քաղաքապետ Նիքոլաքիս, տիկիններ Ռումեան, Սոթրոփուլու եւ Վալիանաթու, Հ.Հ. դեսպանատան զինուորական կրցորդ գնդապետ Ս. Ռամազեան, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի եւ Շրջանային խմբապետութեան ներկայացուցիչներ, տեղւոյն ըսկաուտական ֆետերասիոնի խնամակալ Ֆիլիփու, Հ.Յ.Դ. «Վարանդեան» կոմիտէութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի Աթենքի մասնաճիւղի վարչութիւնը, ըՍկաուտ. Խորհուրդը եւ խմբապետութիւնը, Հ. Կ. Խաչի Գոքինիոյ «Սօւէ» մասնաճիւղի վարչութիւնը, Հ. Կ. Խաչի «Ձաւարեան» ազգային վարժարանի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ ծնողական միութիւնը, «Ձաւարեան» կեդրոնի խորհուրդը, Հ.Յ.Դ. Երիտասարդական միութեան Գոքինիոյ «Փոթորիկ» խումբի վարչութիւնը, Հ. Յ. Դ. Պատանեկան Միութեան Գոքինիոյ «Քրիստափոր» խումբի վարչութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ մասնաճիւղի նախկին վարչութեանց ատենապետներ, Սկաուտ. Խորհուրդի ատենապետուհիներ, խմբապետներ ու անդամներ:



նին ներկայացումը, որուն զուգահեռ ցուցադրուեցան լուսանկարներ: Պատմականը պատրաստեցին եւ ներկայացուցին քոյրեր Անասթասիա Գուլումճեան եւ Մարի Տանկուրեան, լուսանկարներու բաժինը պատրաստուած էր եղբ. Արմէն Միխայիլիտիսի կողմէ:

Միաւորին չորս խմբաւորումները վերանորոգեցին իրենց խոստումն ու երգումը, վառելով իրենց ջահերը եւ խոստանալով որ մէկ ջահի բոցին տակ ամուր կը պահեն Հ.Մ.-Լ.Մ.-ական իրենց ոգին: Ապա, մեծ խանդավառութեամբ կատարեցին խումբերու կանչերը:

Այնուհետեւ, բոլորին մասնակցութեամբ երգուեցաւ 90-ամեակի նուիրուած երգը, որուն խօսքերը գրեց եղբ. Գրիգոր Զաքարճեան:

Ողջոյնի խօսքերով բեմ բարձրացան Գոքինիոյ վարչութեան ատենապետ եղբ. Սողոմոն Նուրճանեան, Հ.Մ.-Լ.Մ.-ի Յունաստանի Շրջանային խմբապետ եղբ. Պետրոս Միքայէլեան, Նիքէյալ-Այ





Իրաննի Ռենտիի քաղաքապետ Իրաքիմիտիս, տեղւոյն սկաուտական ֆետերասիոնի խնամակալ Ֆիլիփու եւ Հ.Մ.-Լ.Մ.-ի Շրջանային վարչութեան քարտուղար քոյր Գոհար Ալեանաքեան: Հանդիսութիւնը իր ողջոյնի խօսքով եւ «Պահպանիչ»ով փակեց Հայր Սուրբը:

Այս առիթով շնորհակալութեան խօսք

այն բոլոր խմբապետներուն, որոնք տարիներ շարունակ իրենց անվերապահ ծառայութիւնը մատուցած են Հ.Մ.-Լ.Մ.-ին, նաեւ՝ բոլոր անոնց, որոնք կամքէ անկախ պատճառներով չկարողացան ներկայ ըլլալ տօնակատարութեան:

Հանդիսութեան առաջին մասը վերջ գտաւ Հ.Մ.-Լ.Մ.-ի քայլերգով, ապա յաջորդեց խրատականքը՝ երկրորդ յարկի սրահէն ներս:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Reservations

Studio KEN 2005 PAGES



ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ԲՈՑԱՎԱՌ ԶԱՀԸ ԿԸ ՓՈԽԱՆՑՈՒԻ ՍԵՐՈՒՆԴԷ ՍԵՐՈՒՆԴԷ

Թղթակից
ԳԱՅԻՐԷ

ՀՍԿՈՒՄԻ ԵՐԵԿՈՑ

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի հարիւրամեայ միութեան սկաուտական շարժումը 60 գայիկ-արժուիկներով, արի-արենոյշներով եւ երէց-պարմանուհիներով պաշտօնապէս վերականգնեցաւ Ապրիլ 2014-ին, այն օրերուն երբ հայրենիքն ու Սփիւռքը կ'ոգեկոչէին Մեծ Եղեռնի 99-ամեակը:

Արդարեւ, Չորեքշաբթի, 23 Ապրիլ 2014-ին, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի ահումբին մէջ, սկաուտական շարժումին խմբապետական կազմը կազմակերպեց հսկումի երեկոյ մը՝ նուիրուած Հայկական Յեղասպանութեան 99-ամեակին: Ներկայ էին եգիպտահայ թեմի Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեան, Գահիրէի հոգեւոր հովիւ Յակոբ Քհնյ. Յակոբեան եւ երէցկիւնը, Եգիպտոսի մօտ Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Արմէն Մելքոնեան, հիւպատոս Վարդգէս Յովսէփեան, Գահիրէի թեմական ժողովի ատենապետ Նուպար Սիմոնեան, Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի տնօրէն տէր եւ տիկին Սիմոն Չամբերթէնեան, «Յուսաբեր» շրջանակի ներկայացուցիչ Պետրոս Մխտիկեան, Յուսաբեր Մշակութային Ընկերակցութեան ատենապետ



Չախէն աջ՝ Եգիպտահայ թեմի Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեան, «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան ատենապետ տոքթ. Սուրէն Պայրամեան, Եգիպտոսի մօտ Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Արմէն Մելքոնեան եւ օրէնքի մասնագէտ դոկտ. Այման Սալամա մոնավառութեան եւ երթի պահուն:

տոքթ. եւ տիկ. Սուրէն Պայրամեան, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի փոխ ատենապետ եղբ. Կարօ Թումայեանց, Ազգային իշխանութեան անդամներ, միջազգային օրէնքի մասնագէտ դոկտ. Այման Սալամա, պատմաբան եւ հայկական հարցերու մասնագէտ դոկտ. Մոհամմէտ Ռէֆաաթ, հասարակական գործիչ դոկտ. Մակտա Շորպա, քոյր միութիւններու ներկայացուցիչներ, եգիպտական մամուլի թղթակիցներ, սկաուտներու ծրնողներ եւ աւելի քան 150 ներկաներ:

Մարգարաշտին կեդրոնը սկաուտներուն կողմէ



մէ պատրաստուած էր Եղեռնի յուշակոթողին մանրակերտը: Տեղի ունեցաւ մոմավառութիւն եւ խորհրդանշական երթ՝ Սրբազան Հօր եւ Հ.Հանրապետութեան դեսպանին առաջնորդութեամբ, դէպի բոցավառ խարոյկը, որպէս անմար կրակի խորհրդանիշ: Երթին մասնակիցները անցան տարագաւոր սկառուներու շարքերուն ընդմէջէն: Սկառուները բռնած էին Արեւմտեան Հայաստանի քաղաքներուն անուններով ցուցատախտակներ՝ յիշեցնելով դար մը առաջ կատարուած ջարդերու վայրերը: Խարոյկին շուրջ 12 սկառուներ կազմած էին շրջանակ մը, որպէս անմար կրակին շուրջ խոնարհած պարիսպներ: Այս առիթով ներկաները գետեղեցին ծաղիկներ, որոնք կը տրամադրուէին մուտքին: Քանի մը վայրկեանի ընթացքին, անմար կրակին շուրջ, մթութեան մէջ

կազմուեցաւ ծաղիկներով ու մոմերով տպաւորիչ, յուզիչ եւ լուսաւոր մեծ շրջանակ մը: Բոլոր սկառուները գետեղեցին ծաղիկներ, որմէ ետք ներկաները ուղղուեցան մարգաղաշտին կից գտնուող տարածքը, ուր տեղի ունեցաւ ծառատնկում՝ Մեծ Եղեռնի գոհերու յիշատակին, ձեռամբ եւ օրհնութեամբ Սրբազան Հօր, կողքին ունենալով դեսպանը եւ հիւրեր:

Մոմերով երթէն եւ ծառատնկումէն ետք, ներկաները ուղղուեցան Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի «Մէօթեմէտեան» սրահ, ուր մեծ պաստառի վրայ ցուցադրուեցաւ «Յեղասպանութեան որբերը» («Orphans of the Genocide») վաւերագրական տեսերիզը:

Երիզի ցուցադրութենէն առաջ, հայերէն եւ արաբերէն լե-

ՆՈՐԱՍՏԵՂԾ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԽՄԲԱՊԵՏ ԵՂԲ. ԱՐԱ ՔԷՕՀՆԷԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Այսօր, այստեղ ներկայ ենք, ոգեկոչելու համար Հայոց Յեղասպանութեան 99-ամեակը: Ոճիր մը, անմարդկային արարք մը, որ խլեց մէկ ու կէս միլիոն անմեղ զոհեր: Թշնամին մինչեւ օրս կը մնայ անպատիժ:

Կը գտնուինք Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի սեմին: Հայաստանի եւ Սփիւռքի մէջ հայութիւնը կը պատրաստուի արժանավայել կերպով նշելու 20-րդ դարու առաջին Յեղասպանութեան 100-ամեակը:

Ջարդին, տեղահանութեան եւ հողի կորստեան կողքին, Յեղասպանութեան լուրջ եւ մտահոգիչ հետեւանքներէն կ'ըլլան անտուն ու անտէր հազարաւոր որբերը: Մեծ Եղեռնի ցաւէն ու տառապանքէն երեք տարի ետք, սակայն, Պոլսոյ մէջ կը ծնի մանուկ մը: Ան կը մկրտուի ջարդին արիւնով եւ կը կոչուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն՝ Հ.Մ.Ը.Մ., որուն պարտականութիւնը կ'ըլլայ յաւիտեան ծառայել հայ ժողովուրդին, առողջ ու ամուր նկարագիրով հայ մարդը պատրաստելու նպատակով:

Արեւելքէն արեւմուտք, 105 մասնաճիւղերով Հ.Մ.Ը.Մ.ը, Յեղասպանութեան օրերուն դարձաւ հազարաւոր որբերու ծնողքը, խնամողը, դպրոցն ու դաստիարակողը: Անմեղ որբերը դարձան իր զաւակները, իրարու կոչելով քոյր եւ եղբայր:

Մենք եւս, մեր կարգին, որպէս Հ.Մ.Ը.Մ.ականներ, մեկնելով այս իրողութենէն, Ապրիլեան այս օրերուն, երբ մեզմէ անբաժան կը մնան մեր ծնողներէն թաց աչքերով փոխանցուած Յեղասպանութեան տեսարանի զանազան դրուագներն ու յուշերը, այսօր, պատիւը ունինք երկար տարիներու ընդմիջումէ ետք յայտարարելու Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկառուական շարժման պաշտօնական վերածնունդը:

Մեծ Եղեռնին եւ բոլոր ժամանակներուն ինկած անմեղ զոհերն ու հերոսները նուիրեցին իրենց կեանքը, ամուր պահեցին իրենց հաւատքը, իբրեւ քրիստոնէայ եւ իբրեւ հայ, որպէսզի մենք ապրինք ու մնանք:

Հետեւաբար, պարտինք ամէն գնով նոր սերունդին փոխանցել մեր պապերէն ժառանգած հայապահպանման դրօշը, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը, որովհետեւ կը հաւատանք որ կեանքը պէտք է շարունակուի ի՛նչ ալ ըլլան պայմանները:

Շնորհակալութիւն, որ ներկայ էք հսկումի այս երեկոյին:

Իսկ դուք ծնողներ, մեր 60 գայլիկ-արծուիկներու, արի-արենոյշներու եւ երեց-պարմանուիկներու մայրեր ու հայրեր, մեր երախտագիտութիւնը կը յայտնենք ձեր բոլորին, որ վստահութիւն ունեցաք մեր վրայ եւ ընդունեցիք որ ձեր զաւակները մաս կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին: Ձեր զաւակները մեր զաւակներն են, որոնք կոչուած են հաւատարիմ ըլլալ Աստուծոյ, իրենց ծնողքին, ծառայել ազգին ու հայրենիքին, միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի եւ վեհանձն մարդ, աշխատիլ հայ ժողովուրդի իրաւունքներուն իրագործման համար, միշտ պահպանելով հայ լեզուն, հայ մշակոյթը եւ ազգային նկարագիրը:

Յատուկ շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք նեցուկ կը կանգնին մեզի եւ իրենց լուրջ մասնակցութիւնը կը բերեն սկառուական շարժման յաջողութեան: Անոնց անվերապահ նուիրումը բնական արդիւնքն է Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին իրենց կատարած երդումին, հաւատալով Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանին՝ «Բարձրացի՛ր քարձրացուր»-ին:



գուներով բացման խօսք արտասանեց Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկաուտական կազմի խմբապետ եղբ. Արա ՔէօՏնէլեան: Եղբայրը ներկաները ողջունելով զանոնք հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լուսթեամբ յարգելու յիշատակը Յեղասպանութեան զոհերուն, ապա ան յայտարարեց Փահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկաուտական շարժումին պաշտօնական վերածնունդը (խօսքը տեսնել առանձին):

Արեւոյշ քոյր Կարին Կրպոյեան ներկայացուց ցուցադրուելիք տեսերիզին մասին տեղեկութիւններ, որմէ ետք ցուցադրուեցաւ մէկ ու կէս ժամ տեւողութեամբ «Յեղասպանութեան որբերը» վաւերագրական ժապաւէնը (բեմադրիչ՝ «Արմէնոյտ խումբ»ի հիմնադիր եւ չորս անգամ չրջանային պատկերասփիւռի «էմմի» (Emmy) մրցանակի մրցանակակիր Պարէտ Մարոնեան): Քոյր Կրպոյեան ներկաներուն նշեց, որ «Յեղասպանութեան որբերը» ժապաւէնը իրականացած է իտալահայ Պէգիկեան ընտանիքին նիւթական օժանդակութեամբ եւ ապա բացատրեց, թէ ի՞նչպէս ընթացած է ժապաւէնին պատրաստութիւնը եւ ի՞նչ դժուարութիւններու հանդիպած է Մարոնեան:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ պատրաստուած ըսկաուտներու ծնողներուն կողմէ:

Աւարտին, սկաուտական շարժման յարատեւման համար Սրբազան Հօր մաղթանքներէն ու «Պահպանիչ»էն ետք, ներ-

կաները սրահէն մեկնեցան ոգեւորուած, աւելի հայացած եւ հայապահպանման շունչով վերանորոգուած:

ՏՈՂԱՆՑՔ-ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Հինգշաբթի, 24 Ապրիլ 2014-ի երեկոյեան ժամը 6.30-ին, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկաուտական կազմը տողանցքով մուտք գործեց Փահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ բակը, ապա ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին եւ հոգեհանգստեան պաշտօնին՝ յարգանքի իր տուրքը մատուցելով Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին:

Կազմը եկեղեցւոյ բակ մուտք գործեց առաջնորդութեամբ Եգիպտոսի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական դրօշակակիրներուն, որոնց կը յաջորդէին թմբկահարներ եւ ապա՝ երէց-պարմանուհիներ, արի-արեւոյշներ եւ գայլիկ-արծուիկներ:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, խումբը ուղղուեցաւ եկեղեցւոյ բակը, Հայկական Յեղասպանութեան զոհերու յիշատակին տեղադրուած խաչքարին առջեւ յիշատակի ծաղկեպսակ գետեղելու:

Խաչքարին առջեւ բոլոր սկաուտները «պատուի առ» կանգնեցան, որմէ ետք տողանցքով մեկնեցան բակէն՝ արժանանալով ներկայ ժողովուրդի ծափերուն եւ գնահատանքին:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY Armavia Արմավիա

- Direct Flights PARIS YEREVAN PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days



11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com



48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com



67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr



32-38, rue Hamrabadoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com




ԵՂԲ. ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՀՔԷՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ՍՈՒՐԻԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԶՈՀԸ)

**Րաֆֆի Սիլահեան
ՀԱԼԷՊ**

ՆՄ.Ը.Մ. նահատակ մըն ալ տուաւ սուրիական տագնապին: Զոհը այս անգամ եղբայր Անդրանիկ Քահքէճեանն էր, որ 16 Մայիս 2014-ին, անժամանակ կերպով հրաժեշտ տուաւ իր սիրելիներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին: Եղբ. Անդրանիկ նահատակուեցաւ Տէր Զօրի օրհնեալ հողին վրայ: Ան իր նահատակութեամբ կարծէք եկաւ շնորհակալութիւն յայտնելու ասպնջական այն երկրին, որ հարիւր տարի առաջ նոյն հողին վրայ հիւրընկալեց իր ժողովուրդին տառապեալ զաւակները, մեծ հայրերն ու մայրերը: Եղբ. Անդրանիկ Քահքէճեան ծնած է Հալէպ, 1991-ին:



Փոքր տարիքէն ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերուն եւ շեփորախումբին ու դարձած է անոնց նուիրեալ անդամներէն մէկը: Անոր համար ծառայութիւնը պարտականութենէ մը աւելի պարտաւորութիւն էր: Ան եղաւ միութեան օրինակելի եւ տիպար անդամներէն մէկը: Շուրջ չորս տարիէ ան կը ծառայէր սուրիական բանակին: Հալէպ ամէն այցելութեան ան կ'արտայայտուէր, որ իր մահը բնական մահ պիտի չըլլայ:

Եղբ. Անդրանիկի նահատակութիւնը յատկանշական այլ իմաստ մըն ալ ունեցաւ, երբ ան յաջորդեց ամիսներ առաջ իր խումբի նահատակուած ընկերոջ՝ եղբ. Վրէժ Քէշիշեանին, որ դարձեալ նահատակուեցաւ պատերազմի ճակատին վրայ:

Սիրելի Անդրանիկ, ինչպէս կարելի է մոռնալ բանակումներու խարուկահանդէսները, ուր դուն եւ «Յովազ» խումբի ընկերները յաճախ «Մենք անկեղծ գինուոր ենք» երգով կը փափաքէիք փակել: Այսօր, դուն դարձար անկեղծ գինուորը սուրիական հայրենիքին: Դուն նահատակուեցար, որպէսզի մենք ապրինք: Նահատակուեցար եւ դարձար այն օրինակելի Հ.Մ.Ը.Մ-ականը, որ միշտ պատրաստ եղաւ ծառայելու եւ զոհուելու: Դուն Ֆիզիքապէս հեռացար մեզմէ, բայց անթառամ յիշատակդ պիտի մնայ մեր սրտերուն մէջ: Հողը թեթեւ զայ վրադ, սիրելի՛ եղբ. Անդրանիկ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵԱՆ ՏՈՒՐՔԸ...

Շարունակուած Բ. կողքէն

ջալերանքով կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերուն, որպէս գայլիկ, ապա՝ ըսկառուտ, ուր կը ստանձնէ խումբերու պատասխանատու պաշտօններ եւ կը ստանայ Առաջնորդի աստիճան: Ան իր մասնակցութիւնը կը բերէ տարեկան բանակումներու եւ միջ-մասնաճիւղային մրցումներու: Լաթաքիոյ մէջ տեղի ունեցած մրցումներուն ան կը գրաւէ լողի երկրորդ դիրքը: Մաս կը կազմէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի շեփորախումբին:

Եղբ. Սագօ Հ.Մ.Ը.Մ.Ի կողքին անդամակցած է նաեւ Պատանեկան Միութեան եւ ապա փոխանցըլած է ՍԵՄ-ի շարքեր:

Նահատակուեցաւ Գամիշլիի մէջ իր ազգային-միութենական պարտականութիւնը կատարած պահուն, 13 Մայիս 2013-ին:



ԵՂԲ. ՎՐԷՓ ՔԷՇԻՇԵԱՆ.- Ծնած է 1992-ին, Հալէպ: Իր երէց երկու եղբայրներուն օրինակին հետեւելով, եղբ. Վրէփ անդամակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի սկառու-

տական շարքերուն եւ դարձաւ անոր տիպար տարագաւորներէն մէկը: Ազնիւ, համեստ, ընկերասէր, բարեկիրթ ու աշխատասէր եղբայր Վրէփը քաղաքացիական պարտականութեան ընդառաջելով մաս կազմեց սուրիական բանակին: Պատերազմի դաշտին վրայ ան ենթարկուեցաւ բազմաթիւ վտանգներու եւ վիրաւորուեցաւ քանի մը անգամ:

Եղբ. Վրէփ զոհուեցաւ 15 Օգոստոս 2013-ին, իսոր վիշտ պատճառելով իր հարազատներուն եւ ընկերներուն:



ԵՂԲ. ԳՐԻԳՈՐ ԱՇՆԱԳԼԼԵԱՆ.- Գեղադէմ եւ ժպտերես եղբ. Գրիգոր Աշնազըլեան ծնած է Հալէպ, 1995-ին: Կակող թաթիկի հասակէն ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.Ի-ին, ապա դարձած է գայլիկ եւ սկառուտ: Աժխոյժ եւ պարտաճանաչ եղբ. Գրիգորը սիրեց միութիւնը եւ դարձաւ անոր օրինակելի անդամներէն մէկը: Զինուորական ծառայութեան շրջանին նոյն-

նիսկ, երբ առիթը կ'ընծայուէր իրեն, ան կը ներկայանար խումբի գործունէութիւններուն եւ ընկերներուն հետ հանդիպումի պահուն միշտ կ'ըսէր, թէ պիտի գայ օրը, երբ երկիրը պիտի խողաղի: Ան չհասաւ սակայն իր փափաքը տեսնելու:

Նահատակուեցաւ Հալէպի պատերազմական գործողութիւններու ժամանակ, 16 Ապրիլ 2014-ին:



ԵՂԲ. ՎԱՐԴԱՆ ԱՆՏՐԵԱՆ.- Զարքաշ նկարագրով եղբ. Վարդան ծնած է Քեսապ, 1962-ին: Ան ճանչուած էր ոչ միայն Քեսապի, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ բոլոր շրջաններուն մէջ: 1994-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Քեսապի մասնաճիւղի վերակազմութեան առաջին օրէն իսկ ան եղաւ մասնաճիւղի պատասխանատուներէն մէկը եւ գանազան տարեշրջաններ մաս կազմեց մասնաճիւղի Սկառուտ. Խորհուրդին: Ան իր մասնակցութիւնը բերաւ միջ-մասնաճիւղային ժողովներու, բա-

նակումներու եւ տողանցքներու, միշտ ցուցաբերելով արտակարգ աշխուժութիւն եւ տքնաջան աշխատանք: Նահատակուեցաւ Քեսապի ազատագրումի կռիւններուն, սուրիական բանակի կողքին ճակատումի ժամանակ, Չայմայի մէջ, 11 Մայիս 2014-ին:



ԵՂԲ. ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՀՔԷՃԵԱՆ.- Ծնած է Հալէպ, 1991-ին: Փոքր տարիքէն անդամակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի սկառուտական շարքերուն եւ շեփորախումբին ու դարձաւ անոնց նուիրեալ անդամներէն մէկը: Անդրանիկին համար ծառայութիւնը պարտականութենէ աւելի եղաւ պարտաւորութիւն մը: Ան եղաւ միութեան օրինակելի եւ տիպար անդամներէն մէկը: Թէեւ սուրիական բանակի ծառայութեան շրջանը սահմանուած է մէկ ու կէս տարի, բայց տիրող պայմաններուն բերումով եղբ. Անդրանիկ բանակին ծառայեց շուրջ չորս տարի: Ան դարձաւ անկեղծ զինուորը հայրենիքին:

Նահատակուեցաւ Տէր
Զօրի օրհնեալ հողին վրայ,
16 Մայիս 2014-ին:



ԵՂԲ. ԿԱՐՕ ԱՍՏՈՒՐ-ԵԱՆ. - Եղբ. Կարօ Աստուրեան ծնած է Հալէպ, 1982-ին: Ընտանիքին միակ մանչ զաւակն էր ան: Փոքր տարիքէն սիրեց երգն ու երաժշտութիւնը եւ մաս կազմեց Հ.Մ.Լ.Մ-ի շեփորախումբին, որուն հետ ան իր մասնակցութիւնը բերաւ միջ-մասնաճիւղային տողանցքներու, ազգային եւ տօնական առիթներով կազմակերպուած ոգեկոչումներու:

Տիպար Հ.Մ.Լ.Մ-ականի նկարագիրով եղբ. Կարօ սիրուեցաւ բոլորին կողմէ եւ իրել պարտաճանաչ ու օրինակելի եղբայր նշանակուեցաւ Հ.Մ.Լ.Մ-ի շեփորախումբի յանձնախումբի անդամ:

Նահատակուեցաւ Հալէպի Սիւլէմանիէ շրջանին մէջ ինկած ռումբի մը պատճառով, 7 Յունիս 2014-ին:

15 Յունիս 2014

ԵՂԲ. ԳՐԻԳՈՐ ԳԻԶԻՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ


Կարօ Աւագեան ԱԹԵՆՔ

Հ. Հ.Մ.Լ.Մ-ի Յունաստանի ընտանիքը անցնող Ապրիլին դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու վեթերան նկառու, խմբապետ-Աքելլա եւ Հ.Մ.Լ.Մ-ի հաւատաւոր գինուորներէն՝ եղբ. Գրիգոր Գրիգրեանը:

Գրիգոր Գրիգրեան ծնած ու մեծցած էր Գոքինիոյ մէջ: Յաճախած էր Գոքինիոյ «Զաւարեան» վարժարանը, իսկ այնուհետեւ բնաւ չէր հեռացած «Զաւարեան»ի շուրջէն: Փոքր տարիքէն ան գործօն մասնակցութիւն բերած էր Հ.Յ.Գ. պատանեկան եւ աւելի ուշ՝ երիտասարդական խումբերուն: Պատանի տարիքէն ան անդամագրուած էր Հ.Մ.Լ.Մ-ի, նախ՝ որպէս մարզիկ, ճկուն ֆուլթպոլիստ, եւ ապա սկառու՝ հասնելով խմբապետի աստիճանին: Երբ իրեն յանձնուեցաւ մատղաշ տարիքի տղոց վերահսկումը, որպէս ակաբա, ան ստանձնեց գայլիկներու վոհմակը եւ անկէ ետք ամբողջութեամբ նուիրուեցաւ այս պատասխանատուութեան՝ մեծապէս արժեւորելով իր գործունէութիւնը: Ան գանազան խաղեր եւ երգեր կը սորվեցնէր գայլիկներուն, վայելելով անոնց սէրն ու համակրանքը: Սկառուտական բանակումներուն իր մասնակցութիւնը կը բերէր իր վոհմակով:

Եղբայր Գրիգոր շնորհալի ձիրքերով անձ մըն էր: Իր յատկանիշներէն էր գծագրութեան մէջ դիւրութիւնը. վայրեր, դէմքեր, տեսարաններ իր գրիչին տակ կեանք կը ստանային: Ժամանակին, ան նկարագարող պարբերաթերթի մը մէջ լոյս ընծայել տուաւ Փեսթալոնիի պատմութիւնը:

Իր մեծագոյն սէրը երաժշտութիւնն էր: Ան երաժշտական արուեստի սիրահար մը ըլլալով, դասընթացքներու հետեւած էր եւ ինքնաշխատութեամբ զարգացուցած էր իր



ձիրքը: Շրջան մը աշխատանք տարած էր պատանե-

կան երգչախումբի մը կազմութեան սատարելով: Օժտուած ըլլալով սքանչելի ձայնով եւ տպաւորիչ կատարողութեամբ՝ իր մեներգներով ան կը ճոխացնէր հաւաքոյթները եւ ձեռնարկներու յայտագիրները:

Եղբայր Գրիգոր յօրինած էր սկառուտական քանի մը երգեր, որոնք շարունակ կ'երգուին սկառուտական խմբակներու կողմէ: Ան յօրինած էր նաեւ համա-Հ.Մ.Լ.Մ-ական առաջին բանակումին քայլերգը, որ տեղ գտած է Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական վարչութեան կողմէ պատրաստուած երգարանին մէջ, Պէյրութ, 1987:

Անշուշտ, բոլորը կը յիշեն իր յօրինած սիրային հանրաժանօթ երգերը՝ «Մի ամաչիր» եւ «Դու ինձ համար»ը, որոնք շատ յաջող ձեւով կ'երգուէին ու կ'երգուին մեր ինձնօրէններուն եւ հաւաքոյթներուն ընթացքին, ժողովուրդին տրամադրութիւնները բարձր պահելով: Այս երգերը ձայնագրուած են Պէյրութի մէջ եւ մեկնաբանուած են անուանի երգիչ Ատիս Հարմանտեանի կողմէ:

Եղբայր Գրիգոր ամուսնացած էր հեզահամբոյր տիկին Լուսինն հետ, Գրիգոր եւ Սիրվարդ Տէր Խաչատուրեաններու ընտանիքէն, ընտանեկան երջանիկ բոյն մը կազմելով: Բախտաւորուած էր երկու զաւակներով, որոնք իրենց կարգին հայաշունչ ընտանիքներ կազմեցին եւ նուիրումով լծուեցան յունահայութեան ծառայութեան՝ օրինակ ունենալով իրենց ծնողները:

Եղբայր Գրիգոր իր կեանքին ընթացքին գործեց միշտ որպէս նուիրեալ Հ.Մ.Լ.Մ-ական, իր միութեան կարգախօսը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը կեանքի ուղեցոյց դարձնելով:

Տարբեր Հայեացքով



ՍՈՒՏՈՔՈՒ

	2		7		6		9	
		9				3		
	3			9			5	
8			4		9			5
2		7				4		8
6			3		7			1
	5			1				4
		6				5		
	7		5		3			6

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

8	6	7	1	3	9	2	4	5
1	4	9	2	5	8	6	7	3
3	2	5	4	6	7	9	1	8
9	8	1	7	2	6	3	5	4
4	3	6	9	8	5	7	2	1
7	5	2	3	4	1	8	9	6
6	7	8	5	1	2	4	3	9
5	9	4	6	7	3	1	8	2
2	1	3	8	9	4	5	6	7



Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ


1. «Ֆորմիլա 1»-ի խալացի մրցավարորդ:
2. Իգական անուն - Գրաբար՝ ո՞ւր:
3. Յուցական ածական - Վախ:
4. Քահանայի զգեստաւորումներէն:
5. Յուցական ածական - Պարսաւել:
6. Երբեմնի պոլսահայ մեծահարուստներու տրրւած մակդիր - Պատմական մայրաքաղաք մը - Կանգնիր:
7. Զայնակից գիրեր - Արական անուն - Նշանաւոր շատակերը:
8. Խօսք մտիկ ընել - Ամբողջովին:
9. Խմիչքի տեսակ (հակ.) - Թաքուն պայթուցիկ:
10. Պարտիզպանի գործիք - Յուցական ածական - Սպասուած փրկիչ:
11. Գերիշխանօրէն - Հ.Մ.Ը.Մ.ի նախկին մամուլէն:
12. Առանց աղի - Գեղմ - Հիւանդութիւն:
13. Այբուբենէն - Դե՛հ - Զգտիլ - Ռուսերէն՝ այո՛:
14. Տարուան եղանակներէն - Բուրդ - Պատրուճակ:
15. Սերգէյ Միոնովիչի կուսակցական ծածկանունը - Արական օտար անուն - Մեծ մուրճ:
16. Դաշտավայր - Իրանահայ օրաթերթ - Յնծութիւն:
17. Եւրոպական ոստան - Յարդախառն շաղախ - Արական օտար անուն - Տարիք:
18. Տարիք - Ժխտական պատասխան - Վայրի ելակ - Գրաբար՝ հասկցիր:
19. Եղելութիւնը առարկայականօրէն արժեւորող - Բարգաւաճի:
20. Աղալու ցորեն - Քաղաքավար - Ընտանիքի տէր:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Կարաւանի առաջնորդ՝ արու ուղտ - Փաքիստանի ահաբեկեալ վարչապետներէն:
2. Վազգէն Շուշանեանի «Գիշերները» - Արաբ իշխան - Շին Ֆէյնի երբեմնի զինւորական թեւը:
3. Յարութիւն Շահրիկեանի ծածկանուններէն - Հայ նահապետ - Հանքային համեմ:
4. Հոլովակերտ մասնիկ - Փորթուգալցի ֆութպոլիստ:
5. Ակռաներու շարք - Խօսք - Էական բայէն:
6. Նմանաձայն տառեր - Լսողութիւնը կորսնցնել - Խոպան:
7. Գերագոյն երանութիւն՝ անգորրութեան մէջ - Խրուաթ թենիսմէն:
8. Դե՛հ - Դրախտ - Միջուկը դժուարաւ ելլող (ընկոյզ) - Որովհետեւ:
9. Պայմանական - Տարածքի միաւոր - Մէկը - Կերպասի լայնք:
10. Սայրասուր - Յած - Կաշի:
11. Հոլովակերտ մասնիկ - Ողիմպիական դրօշին՝ Ափրիկէն խորհրդանշող օղակը - Թուաբանութեան հասարակ կոտորակին վերի թիւը - Խարազն:
12. Երջուած՝ հաւկիթ - Գիշակեր - Աւրուիլ - Սարսափ:
13. Հայ նահապետ - Արու վայրի ոչխար - Իրաքեան լրատու գործակալութիւն:
14. Երնէ՛կ - Դիմագիծէն ճակատագիր գուշակող:
15. Շանի - Վերտիի օփերաներէն - Տեղ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

ԹԻՒ 214 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՐՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1		Պ	Ա	Յ	Է	Ր	Ն	Մ	Ի	Ի	Ն	Ի	Ն	Ի	Ն
2		Ա	Յ	Ե	Ր		Շ	Է	Ն		Ի	Մ	Ս		
3		Ր	Ո	Տ	Ի	Ն		Յ	Ա	Յ	Ր	Ա	Տ		
4		Պ		Ն	Շ	Ա	Ր		Ա	Յ		Ե			
5		Է	Լ	Ի	Ն	Ա	Ղ	Ա	Ն	Ի	Է	Լ	Ե	Ա	Ն
6	Ա	Լ	Ի		Ա	Ղ	Ա	Ն	Ղ		Մ	Ա	Լ		Ի
7	Ռ	Ի	Պ	Ե	Ր	Ի					Ի	Կ			
8	Ա	Զ	Ե	Ր	Ի		Մ			Լ	Ա				
9	Ս	Է	Ր		Ն	Շ	Է				Կ				
10	Պ		Ի		Ջ	Ո	Կ			Ո					
11	Ե	Ղ	Ա	Ն		Մ	Ա	Ր	Գ	Ա	Ր	Է	Ն		Ա
12	Լ	Ա		Ա	Ճ	Ի	Լ		Ա	Ր	Ն	Ն	Ե	Ա	Ն
13		Զ	Ա	Ի	Է	Ն		Յ	Յ		Կ	Տ	Ր	Տ	Է
14	Մ	Ա	Յ	Թ			Ղ	Է		Ի	Կ				Ա
15	Ա	Ր	Ի				Ի	Ս	Լ	Ա	Մ		Յ	Ն	
16	Յ	Ա	Ր	Ս			Պ		Լ	Ի	Տ	Ի	Ա		
17	Ա	Պ		Պ			Յ	Ա	Շ	Ի	Ի				Լ
18	Յ	Ա	Ք	Ա	Ն		Գ	Ա	Ս	Պ	Ա	Ր	Ո	Կ	
19	Ո	Տ		Ն	Ի	Տ	Ա	Լ		Ա		Է	Ր	Ա	Ն
20	Ի		Ղ	Ղ	Ս	Ա	Ճ		Զ	Ր	Ո	Յ		Տ	Օ

ՄԵՐՈՒՆԴՆԵՐ,
ԴՈՒՔ ՁԵՉ
ՃԱՆԱԶԷՔ
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ...

